



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

491.99-6

21-15

2304-10
1905-10

Վր. պ. Գ. Գրականության և Գրադրության

23
23

27 ապր. 1904

Կոստյու

ԵՄՄԱՆՈՒԷԼ ՔԱՀ. ԵԱԶԱՐԵԱՆՑ

91. 99-5

2-15

№ 2/328

Ամ

ԼԵԶՈՒԻ ՀԱՐՑԸ

Ա. ՄԱՍ. — ՀԱՆՈՒՐ ՀԱՅԵԱՅՔ



«Հայուծին՝ առանց հայարար մտա-
ծելու և խօսելու, մենք բարբարոսու-
ծին ենք համարում»:

ՍՏԵՓԱՆՈՍ ԵԱԶԱՐԵԱՆՑ.

ՄՈՍԿՈՒԱ.

Տ Պ Ա Ր Ա Ն Ի Ք. Բ Ա Ր Խ Ո Ւ Դ Ա Ր Ե Ա Ն Ց Ի.

1904.

1342.



10.07.2013

228/26

ГЛАВНОЕ УПРАВЛЕНИЕ

ПО ДЕЛАМ ПЕЧАТНОГО ДЕЛА

Дозволено цензурою. С.-Петербургъ, 16 Октября 1903 года.



Тип. Х. Бархударяцъ, Москва, Срѣтенка, Мясной пер., д. Бѣлева.



0225
41

† ՏԻՎԻՆ ՄԱԳԻԱՂԻՆԷ ԷՔԻԶԻԼԻՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ.

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Երես, տող.	սխալ.	ուղիղ.
15 24	նպաստիւք	նպաստիւք
18 27	Ախպերդան	Ախպերդեան
38 14	Հողակոյտը	Հողակոյտը,
67 21	V—XIX	V—IX
79 25	«Լումայ» 1903, № 4.	Ibid, նոյն երես.
79 26	Ibid, նոյն երես.	«Լումայ» 1903, № 4.

Ն Ի Ի Թ Ե Ր Ի Ց Ա Ն Կ Ը

Առաջարան	6
Ներածութիւն՝ ա) Լեզուի նշանակութիւնը . . .	7
բ) Մեր լեզուի մասին առհասարակ.	
I. Գրարարի ու աշխարհարարի հարցը	25
II. Լեզուն մարբելու ջանքեր	36
III. Լեզուն ընտանիքում ու դպրոցում	47
IV. Լեզուն պարբերական մամուլի մէջ	58
V. Լեզուն ոչ-պարբերական մամուլի մէջ	62
ա) Ինքնուրոյն գրողներ	
բ) Թարգմանութիւններ.	
VI. Մեր լեզուաշէններն ու լեզու տարածողները . . .	84

ԱՌԱՋ ԱՐԱՆ

Մեր ժողովրդի ներքին ու արտաքին կեանքը մօտիկից դիտողները ու մեր լեզուի հարցով շահագրգռվողները նկատած կլինեն, 1), որ մեզնում հայախօսումիւնը ոչ միայն չէ տարածվում, այլ և հետզհետէ գործածումիւնից հանվում է, և 2), որ մեր գրականութիւնն էլ լեզուի հարցում հանրապէս որ և է զգալի առաջադիմումիւն չէ անում: Սակայն, եթէ մենք դժուարանում ենք մեր ժողովրդական կեանքին այնպիսի ուղղումիւն տալ, որ հայախօսումիւնը նրանում պահանջ դառնայ, իմ կարծիքով, չպէտք է դժուարանանք լեզուներս գրականութեան մէջ մաքրելու և կանոնաւորելու գործում:

Այդ նպատակով ես իմ կողմից տալիս եմ «Լեզուի հարցը»:

20 սեպտեմբերի 1903.

Մօսկվա.

է. ք. ն.

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Գրականութիւնն ամուլ է ուր որ ժողովուրդ և գրականք միեւնոյն լեզուով չեն խօսիր, կամ՝ որ նոյնն է՝ գրականք մարց խօսած լեզուով չեն գրեր: Մեծ է զօրութիւն մայրենի լեզուին, զի մարք են մարդկային լեզուաց ի բնէ ուսուցիչները, էնոնցմէ կրծնի լեզուին ոգին, և գրականացմէ կ'առնու իր զարգն ու հարստութիւնը *):

ԵՐ. Օտեան.

*) ԼԵԶՈՒԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ.

Ք. ՊՍՏԿԱՆԵԱՆ.— Լեզուաբանական տեսակէտից լեզուն իր բոլոր ցեղային բարբառների համախմբումն է, իսկ գրական լեզուն՝ նրանց մի պատահական ներկայացուցիչը միայն («О мѣстѣ, занимаемомъ армянскимъ языкомъ въ кругу индо-европейскихъ» 1879, Եր. 12):

*) Ցիտատների լեզուն ու ուղղագրութիւնը թողնում եմ նոյնութեամբ:

Օ. ՇՐՍԴԷՐ.— Լեզուարանութիւնն ու պատմութիւնը առաջ են գնում ձեռք-ձեռքի տված՝ օգնելով միմեանց, որովհետեւ ժողովուրդների կեանքը ցլանում է նրանց լեզուի մէջ, լեզուի՛, որ այդ կեանքում տեղի ունեցող փոփոխութիւնների հաւատարիմ հայելին է. և որտեղ տոհմային ժամանակագրութիւնը կանգ է առնում ու աւանդութեան թիւը կտրվում է, այնտեղ սկսում է լուսաւորել նրանց օրօրոցը բառերի այն հին ճննդարանութիւնը, որ տեսիլ է թագաւորութիւնների անկումը (Ա-րք Օ. Шрадеръ, переводъ съ нѣмецкаго, С.-Петербургъ, 1886, էր. 14):

ՍՏԵՓՍԵՆ ՊԱԼՍՍՍԵՆՆԵՍԵՆ.— Հին և մանաւանդ ասիական գրականութիւնների մէջ «ազդ» բառի տեղ՝ շատ անգամ «լեզու» բառն է գործ ածվում, այսինքն թէ ազգը ու լեզուն հնումը մի և նոյն նշանակութիւնը ունէին: Եւ իրաւ որ ազգը ու լեզուն մեծ կապակցութիւն ունին մէկգմէկու հետ. բոլոր այն մարդիկը, որոնք ի բնէ մէկ լեզուով են խօսում, մի առանձին ազգութիւն են կազմում... Լեզուի մէջ երևում է ժողովրդի հասկացողութիւնը և մտածողութեան աստիճանը, որով զանազանվում է նա ուրիշ ազգերից և մի սեպհական կերպարանք ստանում: Ինչպէս որ մարդս՝ առանց լեզուի՛ անբան կենդանիներից շատ չէր զանազանուելու, այնպէս էլ իր սեպհական լեզուն չունեցող ժողովրդին ուրիշ ազգերից զանազանել կարելի չէ: Ահա այս պատճառով ազգն ու լեզուն միմեանցից անբաժան են («Պատ-

մութիւն հայոց գրականութեան», հատոր առաջին, 1865, էր. 74):

Զ. ԱՐՍԷՆ Վ. ԱՅՏԸՆԵՍԵՆ.— Լեզուն իւր յառաջադիմութեան, անկման ու վերանորոգութեան վիճակներովը՝ անվրէպ ծանրաչափ մը կ'ըլլայ՝ մարդկութեան փոփոխմանցը մէջ ազգի մը նիւթական, բարոյական և գլխաւորաբար մտաւորական կենացը յաջող կամ անյաջող վիճակին: Եւ սա է լեզուի մը պատմական նշանակութիւնը: — Քանի որ լեզուն մտաց երեւցուցիչն է, հարկ է որ որչափ գաղափարներ որ միտքը ստանայ, այնչափ նոր տարրներով ալ լեզուն ձօխանայ, որչափ գաղափարներ որ միտքը յօդէ, նոյնչափ յօդուածոյ բառեր (բարդութիւններ) օրըստօրէ երևան ելլեն:— Առատ գաղափարաց տէր ժողովուրդ մը՝ առատ ու ձոխ լեզուի ալ տէր է, գեղեցիկ մտաց տէր ըլլողը՝ գեղեցիկ լեզուի, և այլն («Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի», 1866, Վիեննա, էր. 26, 32, 33):

Մ. ՅՈՎՅ. ՀԻՍՍՐԵՍԵՆ.— Լեզու և գրութիւն ազգաց հետ քալելով և հետեւելով անոնց բազմին պայծառութեան կամ խաւարմանը, կը փայլեն անոնց հետ և կ'իյնան անոնց հետ. ուր առաջինն է ծաղկեալ և յառաջադէմ, հոն մարդիկ ալ փառաց և պայծառութեան մէջ հսկայաքայլ կը յառաջեն, և ուր լեզուն և գրականութիւնը, այսինքն բանականութիւնն և դպրութիւնը, չեն մշակուած կամ յետադարձ կը քալեն, մարդկութիւնն ալ վայրենութեան և կամ

անկման վեճակին մէջ է («Բանասէր», 1851, Կ. Պօլիս, եր. 446):

Բ) ՄԵՐ ԼԵԶՈՒԻ ՄԱՍԻՆ ԱՌՃԱՍԱՐԱԿ.

Ք. Պ. ՊԱՏԿԱՆԵԱՆ. — ... Հին գրական լեզուն, այլ և այլ պատճառներով, որոնք սակայն բաւական յայտնի են ուրիշ ազգերի կենսակրթական (կուլտուրական) պատմութիւնից, անցեալ դարի վերջերքը անձեռնհաս գտնվեց հայերի կենսական ու հոգեւոր պահանջներին բաւարարութիւն տալու: Թողնելով այդ լեզուն աստուածաշտական նպատակների համար, թիւրքահայերը, հիմք ընդունելով Կ. Պօլիսի բարբառը, և նրա մէջ թրքական բառերը շարունակ հայերէններով փոխարինելով՝ կամաց-կամաց կազմեցին նրանից բաւական կանոնաւոր ու ներկայումս հանրատարած մի գրական լեզու, որով հիմա ամէն տարի հրատարակվում են հարիւրաւոր գրքեր և տասնաւոր ամսաթերթեր ու օրաթերթեր:

Կ. Պօլիսը ընդարձակ կայսրութեան քաղաքական կենտրոնն է: Այնտեղ բնակում են մօտ 200,000 հայ, որոնք մտաւորապէս աւելի զարգացած ու նիւթապէս աւելի ապահով են, քան Թիւրքիայի հայ բնակչութեան մնացած մասը (masse): Այս բնակչութեան բարբառը, ինչքան էլ լինի, այս պատճառով իրաւունք ունի գրականապէս իշխելու:

Բոլորովին ուրիշ բան ենք տեսնում ուսուսակների միջև:

Ներկայ դարի առաջին քառորդից յետոյ ուսուսակները քաղաքականապէս խմբված լինելով մի հզոր իշխանութեան տակ, մինչև այն ժամանակը ոչ մտածում էին, ոչ էլ ազատ ժամանակ ունէին, իրանց համար մի գրական լեզու ստեղծելու: Բնակչութեան մեծ մասը, որ Արևելեան բարբառների խմբին էր պատկանում, նոյնպէս չէր կարող համաձայնել ընդունելու թիւրքահայերի գրական լեզուն, մի բան, որ դարձեալ կարելի էր թոյլ տալ, եթէ բոլոր հայերը միացած լինէին մէկ իշխանութեան տակ: Բայց ուսուսակները, որոնք վաղուց էին կտրել իրանց կապը, որ ունէին այժմեայ Օսմանեան կայսրութեան սահմաններում բնակող համազգիների հետ, ինչպէս ասեցինք, պատկանում են այն հայ ցեղերի Արևելեան խմբին, որոնք բոլորովին ուրիշ բարբառներով են խօսում: Նրանց բարբառները, արտասանութիւնը, խօսքի դարձուածքը շատ են տարբերվում Արևելեան հայերի լեզուից: Այս պատճառով մինչ անգամ փորձ էլ չէ արված թիւրքահայերի գրական լեզուն մտցնելու ուսուսակների միջև, որոնց մէջ երկարատե խաղաղութիւնը, նիւթական բարեկեցութիւնը, դպրոցական կրթութեան սկզբնաւորութիւնը և այն զիտակցութիւնը, թէ իրանց կէս միլիօնի հասնող բնակչութիւնը¹⁾ մտած է մի հզոր

¹⁾ Այդ թիւը 1875-ի ուսահայտերի թիւն է: Իսկ նրանց ներկայ թիւ մասին է. Սարգսեան գրում է. «Նոյն իսկ ճշշուած Թիւրքիայից Կովկաս փախած հայերին, բոլոր հայերի

իշխանութեան տակ, վաղ թէ ուշ պէտք է արտա-
յայտվէին իրանց զրական լեզուի կազմակերպվելովը:
Եւ իրան, ներկայ դարի քառասնական թւականնե-
րից մենք տեսնում ենք այդ լեզուի ծագման սկզբնա-
ւորութիւնը: Բայց մի տարօրինակ կերպով՝ ոչ Թիֆ-
լիսի բնակիչների բարբառը, որոնք նիւթապէս միւս-
ներից առաջ էին գնացել և թւով գերազան-
ցում էին միւս կենտրոնները, ոչ էլ Երևանի, այդ՝
չայաստանի սրախի բարբառը, դառաւ այս նոր գրա-
կան լեզուի հիմքը, այլ՝ աստրախանցիների բարբառը,
որոնց մի մասը այլ և այլ ժամանակ Մոսկվա էր տե-
ղափոխվել՝ մի խօսքով՝ Մոսկվա՝ Աստրախանեան
բարբառը, այսինքը այն, որ ամենից քիչ իրաւունք
ունէր, թէ կենտրոնից հեռու լինելով և թէ բնակ-
չութեան սակաւաթիւ լինելու պատճառով:

...Սյսպիսի, ըստ երևոյթին, մէկ անօրմալ երևոյ-
թի պատճառը մասամբ Աստրախանում հիմնված
Աղաբաբեան դպրոցի հիմնարկութիւնն էր, բայց
գլխաւորապէս՝ Մոսկվայում, 1815-ին Լազարեան ձե-
մարանի հիմնարկութիւնը, մէկ այնպիսի էպօխում,
երբ Անդրկովկասի ռուսահայերը ոչ մի կանոնաւոր
կազմակերպված դպրոց չունէին: Քառասնական թւա-
կաններին այդ հիմնարկութիւնից դուրս եկան արդէն
հարիւրաւոր կրթված երիտասարդներ, որոնք խօսում
էին մէկ օրոշ լեզուով, որ, թէպէտ ձեմարանում

Թիւր ամբողջ Ռուսաստանում պէտք է որ առնուազը լինի
1,200,000 և, երևի, չափազանցութիւն չի լինի ընդունել նաև
1,300 հազար» («Մուրձ», 1902, № 4, Եր. 143):

չէր աւանդվում, սակայն գործ էր անվում իբրև
խօսակցական լեզու: Մինչև օրս էլ ձեմարանը ամէն
տարի տալիս է մի քանի տասնեակ երիտասարդներ,
որոնց մի մասը վերագառնում է հայրենիք ու Անդր-
կովկաս, միւսը մտնում է բարձրագոյն դպրոցները՝
մասնագիտական կրթութիւն ձեռք բերելու: Չենք
կարող չյիշել այստեղ մի-երկու տասնեակ երիտա-
սարդներ, մեծ մասամբ Լազարեանների սաներից, ո-
րոնք, յիսնական թւականներին, կայսրութեան ու-
սանողների թւի սահմանափակվելու պատճառով,
մտան Դորպատի համալսարանը: Նրանք շատ նպաս-
տեցին նոր գրական լեզու հիմնելու գործին, ջերմ
մասնակցութիւն ունենալով այն ժամանակվայ գրա-
կան շարժման մէջ: Սյսպիսով Մոսկվա-Աստրախա-
նեան բարբառը, դառնալով կրթված մարդերի բար-
բառ, կամաց-կամաց մտաւ գրական ասպարէզը և
դրեց այն լեզուի հիմքը, որ հանգամանքներից դրոզ-
ված, ճանաչվեց ու ընդունվեց ռուսահայերի կողմից
իբրև գրական լեզու: Շատ ժամանակ չէ՛ անցել այն
օրից, երբ ռուսահայերը ստիպված էին բաւականա-
նալ Թիւրքիայից բերել աված գրքերով, սովորել
նրանց դասագրքերով ու կարգալ նրանց ամսաթեր-
թերը: Սյժմ Ռուսիայում մի քանի տպարաններ
ամէն տարի լոյս են հանում բազմաթիւ բրօշուրներ,
գրքեր, թերթեր ու ամսաթերթեր և իրանց հերթին
բաւարարութիւն են տալիս իրանց թիւրքահայ հա-
մազգիներին գրքերով ու դասագրքերով: Ամէն ինչ
խօսում է այն բանի օգտին, որ այս լեզուն վերջ-
նապէս հաստատված է:

Սակայն չանցաւ շատ ժամանակ, և սխալ կերպով ընարված գրական լեզուի հետեանքները, թէպէտև առաջին անգամը, արտայայտվեցին բացասապէս: Մինչև հիմա, այսինքը երեսուն տարվայ ընթացքում, դեռ աւելի, այս ամբողջ նոր գրականութիւնը չէ տվել ոչ մի նշանաւոր աշխատութիւն, որ կարողանար կանգնել ոչ միայն Եւրոպայի, այլև Ասիայի գոնէ երկրորդ կարգի գրաւոր աշխատութիւնների կողքին: Այս երևոյթի պատճառը գլխաւորապէս այնքան տաղանդների բացակայութիւնը չէ, ինչքան ոտքի տակ հող չունեցող մի լեզուի ընտրութիւնը, որ խորթ է բազմամարդ ու հայրենիքին մօտ եղած կենտրոնների բնակիչներին: Արտադրոյթներից մի քանի աջողվածները պատկանում են այնպիսի հեղինակների գրչին, որոնք վստահացան գրել տեղական բարբառներով. այսպէս են՝ Աբովիանի երկերը Երևանի, Սայեաթ-Նովայինը Թիֆլիսի, և, վերջապէս, Ախտամերկեանի²⁾՝ մեր առաջարկած պատմութեանը նոր-Նախջվանի բարբառով: Այդպիսի ոչ մի երկի մենք չենք հանդիպում նոր-գրական լեզուում: Մտկվայի լեզուն հայոց լեզուի մի միայն արտաքինն է պահպանել. նա կարող է պիտանի լինել օտար գրականութիւնից թարգմանութիւններ անելուն. բայց ինքնատիպ երկերի համար շատ աղքատ է դարձուածների ու լեզուի տոհմային ոգու միւս երևոյթների կողմից: Այն ինչ՝ դառնա-

²⁾ Ռ. Պատկանեանի:

լով կրթված դասակարգի լեզուն, նա ժողովրդական կենդանի բարբառները իջնցնում է գուեհիկ մասսի լեզուի աստիճանին, նրանց դարձնում հասարակ ժողովրդի սեփականութիւն: Հանգամանքներից դրդված, նա կամաց-կամաց իշխում է դպրոցի, դասագրքերի, ժողովրդի կարգալու համար կազմված գրքերի ու քարոզի վրայ, հետզհետէ լայնացնելով իր գործունէութեան շրջանը. մինչդեռ ժողովրդական բարբառները մի և նոյն չափով նեղացնում են իրանց շրջանը, արտաքսվում են հասարակութեան բարձր խւււերից դէպի ստորինները, հասարակական շրջաններից՝ ընտանեկանները և վերջապէս ապաստան են գտնում ընտանեկան օջախի կենտրոններում, կանանց միջև, որտե՛ղ միայն կարելի է հանդիպել մի քանի բարբառների իրանց՝ հնարաւոր եղածի չափ, անձեռնմխելութեան մէջ («Материалы для изученія армянскихъ нарѣчій. Выпускъ I, Говорѣ Нахичеванскій», 1875, եր. X—XIII.):

Հ. ԳԱՐ. Վ. ՁԱՐԲՅԱՆԱԼԵԱՆ. — ... Սովորական աշխարհիկ լեզուն՝ տպագրութեամբ, որչափ որ մեզի ծանօթ է, առաջին անգամ Վենետիկ քաղաքին մէջ կհանդիսանայ, յամի 1685—87, Գուլնազարի որդի Նահապետի ջուղայեցւոյ՝ յատուկ գործարանի մը մէջ և իրեն զրամական նպտատւք, և Յովհաննու Հոլովի աշխատասիրութեամբ: Այս գիրքը որ Պարպաբան-Նիւն հոգեւոր-ազ սահմանայն Դաւիթ կկոչուի, հեղինակին, իր ուրիշ երկասիրութեանցը մէջ գործածած անհարազատ գրաբար լեզուովը չէ, այլ ան-

շուշտ՝ ի խնդրոյ, թերևս նաև ի ստիպելոյ Նահապետի և ուրիշ հայ վաճառականաց որ ի Վենետիկ, աշխարհիկ բարբառով: Բայց հոյով չէ ուզած Զուղայի հասարակաց բարբառը գործածել՝ որ տեղւոյն վաճառականաց աւելի դիւրամանալի պիտի ըլլար, և իրեն ալ անշուշտ ծանօթ, և ոչ ալ իր ծննդեան քաղքին (Պոլսի) բնակչաց աղաւաղ լեզուն. այլ այնպիսի մաքուր և սպրկիկ աշխարհիկ բարբառ մը, որ կերպով մը կրնայ մօտենալ մեր դարուն յղկեալ և զրաւոր լեզուին, մաքրուած անհարազատ բառերէ և ոճերէ, և մերձաւոր ի գրոց բարբառ:

Սյսպիսի էր նաև Մխիթարայ աբբայի խորհուրդն ու փափաքը, երբ յօրինեց ազգերնուս մէջ առաջին աշխարհիկ լեզուի քերականութիւնը, որ դեռ անտիպ մնացած է իր երկասիրութեանցը մէջ, և միայն համառօտութիւն մը տպագրուած ի 1727...

Վրան շատ տարիներ անցնելէն ետքը, սկսան աշխարհիկ լեզուով գրութեանց հրատարակութիւնք երևնալ ազգերնուս մէջ: Ասոնց մէջ գործածուածը՝ պոլսեցի ազգայնոց լեզուն էր. սակայն զանիկայ յըդկելու և կանոնի մը վրայ առնելու ջանքը պակսելով՝ օտար ու այլազգի բառեր, խորթ ոճեր և բացատրութեանց կերպեր սկսան յաճախել այն գրութեանց մէջ: Ասանկով զրագէտք չհրաժարեցան ինչուան ռամիկ ու ժողովրդական լեզու մը գործածելու նուաստութենէ, անոր միտքն ազնուացնելու, կրթութիւնն և ուսումը բարձրացնելու գովելի դիւմամբ:

Աշխարհիկ լեզուին այս անկերպարան և անկանոն

վիճակին մէջ՝ ազգասիրութեանց և ուսմանց եռանդ մը սկսեր էր բորբոքիլ յազգին: Օրագրաց և լրագրաց հրատարակութեան և յառաջադիմութեան սկզբնաւորութիւնը այն ատենին կպատկանի: Ասոնք գեղեցիկ ու նուիրական պարտք մը առած վրանին, իբրու բերան և թարգմանք ազգին լրութեան փափաքանացը, սկսան պահանջել որ աշխարհիկ լեզունիս սրբուի, մաքրուի եկամուտ նորութիւններէ, և ըլլայ զօրաւոր գործի մը ազգային բարգաւաճմանց և յառաջադիմութեան: Իրենք էին ոչ միայն յորդորողք ու քաջալիրք, այլ նաև առաջին ընտիր օրինակները տուողներ իրենց յօրուածներով: Եռանդուն ու հանձարեղ գրիչք՝ ինչուան ազգային գեղեցիկ քերթուածներ ալ հրատարակեցին՝ աշխարհիկ մաքուր լեզուով:

Սյսպիսի համաժաւալ փութոյ մը և ջանքի ատեն՝ աշխարհիկ լեզուին կանոնաւորուելուն արգէն յուզուած ու վիճուած խնդիրը՝ մեծ կարևորութիւն մը առաւ: Սյն ատեններն (1853) հրատարակուած է Ուղղաբօսութեան արդի հայ լեզուի կոչուած՝ հայերէն աշխարհիկ կամ խօսուած լեզուի քերականութիւն մը: Քանի մը բանիբուն և ազգասէր անձանց համամիտ խորհրդակցութեան ու ջանից արդիւնք է այս երկասիրութիւնը³⁾:

...Բայց եղած առաջարկութիւնն և տրուած օրի-

³⁾ Նմուշներ այդ գրքի ուղղագրութիւնից. «Ըսէլ, գործածելի, շրտկէցին, անձէր, մըտքով, հետևած էնք, կատարէլութիւն, ուղղագրութիւն, վերջաւորութիւնը...»:

6225
41



նակը հաճոյ չեղաւ: Ուսումնական ժողովոյ մը յանձնուեցաւ անոր քննութիւնը. և ազգային ձեռնհաս իշխանութիւնն՝ մասնաւոր ազգարար գրութեամբ մերժեց զայն. . .

Տասնութիւն տարուան լուծենէ մը ետքը՝ ուրիշ համանպատակ երկասիրութիւն մ'ալ երեցաւ, և էր. Հայերէն Ժերական-Նի-ն աշխարհաբար լեզու-ի նախալրժական դպրոցաց համար կոչուածը, Մ. Տ. Քիրէճճեան... Արդէն իրմէ առաջ ամերիկացին Ռիկս՝ տեղեակ հայերէն արդի լեզուի, համառօտ քերականութիւն մը յօրինեց էր աշխարհաբարի՝ անգղիարէն բացատրութեամբ, և որուն հետեոյ եղած է Քիրէճճեան. . .

Բայց աշխարհիկ լեզուի՝ մեծագոյն ծառայութիւն ընող հմտական երկասիրութիւն մը դեռ փափաքել էր բանասիրաց: Այս կարևոր պէտքն լիցնողը՝ Այտընեան է. Արսէն վարդապետի հմուտ գրին եղաւ, Քննական Ժերական-Նի-ն աշխարհաբար լեզու-ի կոչուած գրքովը: Բազմալեզու և բազմազէտ հեղինակին՝ արժանապէս պատիւ ընող այս աշխատասիրութիւնը՝ տպագրութեամբ հրատարակուեցաւ ի 1866., յորում շատ անլուծանելի կարծուած խնդիրներ՝ իրենց լուծումը գտած են, և միտին կամ անորոշ համարուածներ՝ լուսաւորուած («Պատմութիւն հայերէն գրութեան», Վենետիկ, 1878, էրես 89, 92, 95—97):

ԳԷՈՐԳ ԱԽՎԵՐԴԱՆ.—Եկեղեցւոյ ազգեցութիւնով թէպէտ վեր է առել կամաց-կամաց գրոց լե-

զուի մէքանի ձեւերն ու դարձուածն. միայն երբէք չենք կարող ընդունել էս բարբառն⁴⁾, որպէս Գրաստուած լեզուի կրճատումն և աղաւաղումն, էնդուր որ՝ ինչպէս վերեն էլ ասի, սա Եղբական հին բարբառներուց մէկն է, կամ Հայաստանեաց բազմաոտ լեզուի մէկ ձիւղն է:

Անհաստատ է մեր կարծիքն՝ իբր թէ բոլոր հայաստանի Հայերն մէկ ժամանակ խօսում ըլին էլի՝ մեր հինգերորդ դարու թարգմանիչներու ու սրանց թարգմանած Ստուածաշունչ գրքի լեզուով: Կարելի է հինգերորդ դարու հայերն մեզանից հարիւրապատիկ հեշտութեամբ էին հասկանում էն լեզուն, բայց խօսելով չեն խօսել: Էնդուր որ՝ ինչպէս հիմի, նոյնպէս և ամէն ժամանակ և ամէն ազգի մէջ սովորելու է էլի գրաւոր կամ գրականական լեզուն: Թէ էլի է և ժամանակ, որ ամէն Հայերն էլ խօսած ըլին էլի մէկ լեզուով, էն էլ Հայկի ժամանակին ու շատ-շատ՝ մէկ էրկու դար նրանից յետոյ: Ազգն բազմանալով՝ ցրվելիս ու գաւառ-գաւառ բովանդակվելիս, հէնց էն զլիէն, համեմատ թէ՛ աշխարհագրական, թէ՛ կենցաղավարական հանդամանքներու, ինչպէս տեսնում ենք ևս ուրիշ ազգերու մէջ, կամաց-կամաց փոխած պիտի ըլի իր մայր լեզուն, ու ժամանակով հարեանիցն էլ բան սովորելով՝ պիտի նրան տված ըլի ամէն տեսակ նոր ձեւեր ու դարձուածներ էնպէս, որ լաւ որոշուել են գաւառական

⁴⁾ Թիֆլիսի հայերի բարբառը:

լեզուներն մէկմէկուց: Հայաստանու հնուց բազմալեզու ըլիլն՝ կարծիք չէ: Էս գաւառական բարբառներուց մէկն, կարելի է հէնց էն, որն որ աւելի կու'լի պահել իր մէջ մայր լեզուի յատկութիւններն, քուրմերու ձեռին, արքունեաց մէջ կամ նախարարներու դրանն աւելի գործ դնուելով ու քաղաքականութեան մէջ աճելով դառել է գրաւոր. ու գրվելով էնպէս կոկվել ու հարստացել է ձոխ ձեւերով ու դարձուածներով, որ ևս նոյն գաւառի բնակչեց պահանջել է իրան հասկանալու ու բանեցնելու համար՝ իր սորվիլն... «Սայեաթ-Նովայ», 1851, եր. իա.):

Գ. ԽՍՏԻՍԵԱՆ. — Լեզուն մտքի փոխանակութեան գործի (Փունկցիօն) է և լիովին արտայայտում է ժողովրդի նիստ ու կացը. ժողովրդի բերանում սա մի ձկուն նիւթ է և նրա խօսելը, մտածելն ու կենցաղը իր դրոշմն է դնում այդ նիւթի վրայ: Եւ որքան մի ազգի կենաքում պատմական ու աշխարհագրական պայմանները շատ տարբերութիւններ են մտցնում, այնքան աւելի լեզուն խիստ է բարբառների բաժանում: Իժւարանց լեռները, ծովերը, տարբեր ժողովրդի հարեանութիւնը կենսակրթական (կուլտուրական) ու քաղաքական պայմանների տարբերութիւնը այդ ձիւղաւորման զխաւոր գործօններն են: Եւ երբ մի և նոյն լեզուի ձիւղերն այնքան են իրարից տարբերում, որ դժւարանում է բերանացի առնչութիւնը—այն ժամանակ այդ ձիւղերին ասում են բարբառներ: Հայի կիանքում այդ

կարգի բոլոր գործօններն եղել են ու կան, ուստի և Հայ լեզուն հնուց արդէն շատ բարբառների է բաժանուում: II կամ III դարում այդ բարբառներից մէկը և մասնաւորապէս այն բարբառը, որ տիրում էր Մամիկոնեանների կալուածն ու Հին Հայաստանի ամենայայտնի քաղաքական կենդրոններից մէկը կազմող Տարօնում (Հիմա Մուշ), ազդեցիկ Մամիկոնեանների դատարաններում ու վարչութեան մէջ գործածուող պաշտօնական լեզուն էր և վերջն էլ դարձաւ Աւետարանի լեզուն, ինչպէս ենթադրում են այժմ (Գ. Հախվերդեան, Լ. Մսերեանց): Այսպէս ծնունդ առաւ գրաբառը, կենսակրթական—կրօնական շարժումը առաւ Տարօնի բարբառը, գրական մշակման ենթարկեց, ու դարձրեց հանրահայկական «սովեդարի» գրական լեզու («Վտակ» 1901, եր 307):

ՍՄԲՍ ՇԱՀԱԶԻՉԵԱՆ. — ...Ամէն ազգի լեզուն, որպէս իւր մէջ ժողովրդ մի կենդրոն, ամփոփում է այդ ազգի բոլոր հոգեբանական և Ֆիզիօլոգիական գործողութիւնները... Այս պատճառաւ կրթութեան ծնողները, ինչպէս և հասարակութիւնն ու դպրոցները, միասին աշխատում են, որ առաջին ձայները, երեխայի ականջին հասած, լինեն մայրենի լեզուով: Իրա հետեանքը այն է, որ «այդ ձայները», անզգալի դրոշմուելով «խօսքի գործարանի մէջ», երանական ցնորքի պէս կախարդում են մանկական սիրտը և պատրաստում ազգային նուիրական ձգտումների համար: Ահա թէ ինչու ո՛չ մի կերպ չի կարելի արդարացնել մեր այն ծնողներին, որոնք մի անբնա-



կան ուղղութիւն են տալիս իրանց երեխաների դաստիարակութեան: Նրանք Հէնց սկզբից, երեխան աշխարհ գալիս, նրա հոգին, նրա ներքին ու արտաքին կիանքը մկրտում են օտար աւազանի մէջ և այդպէս առաջ տանում, այնպէս որ այն, որ երեխայի համար պէտք է լինէր հարազատ ու ընտանի, այժմ թւում է նրան անհարազատ և խորթ («Յիշողութիւններ Վարդանանց տօնի առիթով», 1901, Մօսկվա, եր. 37):

ԽՍ.ԶՍ.ՏՈՒՐ Ա.ԲՈՎԵՍՆ.— Էսքան բաներ լսեցիր՝ սիրելի կարդացող՝ բաս ի՞նչպէս չի սիրող վառվել, որ դու է՛ն ազգի որդին ես, որ էսքան տանջանքը քեզ համար քաշեց, ինքը նահատակվեց, քո կաթիլ ու արինդ ուրիշ ազգի հետ չխառնեց... Ա՛խ՝ էս միտք անողը՝ էլ ի՞նչ սիրտ պէտք է ունենայ, որ իր լեզուն, իր ազգը չսիրի:

Ա՛խ՝ լեզուն, լեզուն, լեզուն որ չըլի, մարդ ընչի՞ նման կըլի: Մէկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզուն ա ու հաւատը: Լեզուդ փոխիր, հաւատդ ուրացիր, էլ ընչով կարես ասիլ, թէ որ ազգիցն ես... Մեր օրօրոցի վրայ մեր լեզվով մեզ նանիկ ասեցին. էն էլայ մեր միտքը չի՞ պէտք է ընկնի... էն վայրենի ազգերն էլ իրանց սոպո լեզուն աշխարքի հետ չեն փոխիլ... էնպէս մարդ կայ՝ տասը, տասնը-հինգ լեզու զիտի, ամա նա իր լեզուն միշտ ամենիցը լաւ աշի, իր ազգի հետ խօսելիս, ամօթ ա համարում, կամ ուրիշ լեզվով իր միտքն ասի, կամ ուրիշ բառ հտըր խառնի... Փրանցուզ, Նիմէց, Ինգլիզ

որ քո լեզուն սիրում, գովում են, քանի՞ պատիկ դու էլ պէտք է սիրես ու գովես:

Ձեզ եմ ասում՝ ձեզ՝ Հայոց նորահաս երիտասարդք՝ ձեր անումին մեռնիմ, ձեր արեւին դուրբան, տասը լեզու սովոցե՛ք, ձեր լեզուն, ձեր հաւատը զայիմ բռնեցե՛ք: Մէկ դարդակ լեզուն ի՞նչ ա, որ մարդ չկարէնայ սովորիլ... Աստուած կիանք տայ էն ծնողացը՝ որի որդիքը ինձ մօտ են: Նրանց առաջին խնդիրքը միշտ է՛ն ա էլել, որ նրանց որդիքը Հայերէն լաւ զիտենան: Գերեզմանն էլ որ մտնիմ, նրանց էս սուրբ խօսքը մտքիցս չի՞ գնալ... Մէկ ազգի պահողն էլ՝ լեզուն ա ու հաւատը. թէ սրանց էլ կորցնենք, վայն էկել ա մեր օրին («Վէրք Հայաստանի»):

ԼԵԶՈՒԻ ՀԱՐՑԸ

1. ԳՐԱԲԱՐԻ ՈՒ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՀԱՐՑԸ.

Այն օրից, երբ մեր Հին⁵⁾, դասական լեզուն կամ Գրաբարը, ի մեծ ցաւ գրաբարասէրների, մանաւանդ թէ գրաբարամոլների, իր երգը երգեց, իր դարը, իր մահկանացուն կնքեց և, ասպարէզը ուրիշ թողնելով, քաշվեց, դպրութեան ու միանգամայն պատմութեան դիւանը մտաւ, էլ այնտեղից դուրս չգալու պայմանով՝ Հրապարակ եկաւ իր բանաւոր յաւակնութիւններով նոր, արդի լեզուն կամ աշխարհաբարը և գրաւեց պարապ մնացած տեղը: Դա այն

⁵⁾ Թաթուլ Վանանդացի «Հանդէս ամսօրեայի» մէջ (1902, № 3) հարցնում է. «Արդեօք տարիքի համեմատութեամբ հանում է հրապարակ «հինի և նորի» խնդիրը»:

Թող պատասխանէ՛ հ. Արսէն վ. Այտընեան. «Հայերէն լեզուն երկու տեսակ կը բաժնուի. 1. Հին հայերէն որ կըսուի գրաբար, և հիմայ կը գրուի ու չի խօսուիր, և 2. Նոր հայերէն որ կը կոչուի աշխարհաբար կամ արդի Հայերէն, և հիմայ կը գրուի ու կը խօսուի» («Քերականութիւն արդի հայերէն լեզուի» 1867, նր. 1):

բնական ու հանրային օրէնքն էր, որի հիման վրայ կենդանին բռնում է մեռածի տեղը, թաղելով վերջինին:

Ուղիղ է, հղան մարդիկ, որոնք նրա մահը քննածուծեան վերադրելով, դեռ յոյսները չէին կտրիկ նրան իր կեանքը վերադարձնելու, բայց Լէտայից ու չինչ չէ վերադառնում: Թողնելով այդպիսիների բազմութիւնը, բերե՛նք նրանցից մի քանիսը:

ԳՍԲՐԻԷԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՎԱԶԵԱՆ գրում է. «...Ռամկական բարբառ մեր կամ աշխարհիկ լեզու, լեզու անկարգ և անկանոն, տգեղ տժգոյն, տձև, անընդունակ կորովոյ և զարգուց պերճախօսութեան և բանաստեղծութեան... մի... զգրոցն բարբառ ընդ մեռեալս զրելով և նեխահոտ իմն համարելով՝ գարշեցուցանեմք զմերազնեայսն ի նմանէ և ի վարժից նորին... Ձև ևս մերձեալ թուի ժամանակն, յորում յաջողեցցի հայկազն մարդկան, գէթ ուսումնականաց, ի բնիկս մեր հայկական բարբառ, որ արդ զրոց կոչի լեզու՝ զըուցակից ընդ միմեանս լինել և ըստ այնմ մատենագրել զգրեան և զլրագիրս ի պէտս հասարակաց»⁶⁾:

Ա. Մ. ԳՍՐԱԳԱՇԵԱՆ էլ 1868-ի «Դպրութեան» առաջաբանի մէջ. «...Ո՞ գիտէ, թերևս ապագային լեզուն զրաբարն ըլլայ»:

«Կը փափագիմք — գրում է «Մասիս» Սնահիտի բերանով —, որ մեր զրագիրտական բարձր թղթակցու-

⁶⁾ «Խանդարմունք հայկաբանութեան», 1869, եր. 16:

թիւնք զրաբար լինին. կփափագիմք, որ ազգային վարչութիւնը պարտք դնէ բոլոր վարժարանաց, ինչպէս նաև բոլոր ընկերութեանց վերայ՝ զրաբար լեզուն պարտաւորիչ ընել ուսումնարանաց մէջ, և այս միջոցներով զրաբարն այսօր զրական լեզու կը լայ, վաղն աւելի կընդարձակի իւր գործունէութեան սահմանը, միւս օր աւելի, և.. օր մը կըտեսնեմք, որ մեր ընդհանուր գործնական լեզուն զրաբար է եղեր»⁷⁾:

Իսկ ճ. ԱՐՍԷՆ Վ. ԱՅՏԸՆԵԱՆ, թիւրքահայերի այդ՝ նոր լեզունն առաջին անգամ որոշ կերպարանք տվողը, սիրահար լինելով մի և նոյն ժամանակ հին, գրում է. «...Գրաբարի մեծութեան, ազնուութեան, գեղեցկութեան հրապոյրքն այնչափ է, որ զինքը ճանչցողներէն անպակաս պիտի ըլլան միշտ՝ նոյնը միւս անգամ կանգնած տեսնելու»⁸⁾:

Եւ դեռ երէկ էր (1902-ին), որ Վիէնայի Մխիթարեան միաբանութեան անդամ ճ. ԳՍԲՐԻԷԼ Վ. ՄԷՆԷՎԻՇԵԱՆ ուզում էր «փորձել անգամ մը թէ արդեօք Մեսրոպեան հայերէնն իրօք անհասկընալի՞ և անմարսելի՞ է՝ ինչպէս կը բանդագուշուէր երբեմն»:
Ոչ ոք առիթով ԹԱԹՈՒԼ ՎԱՆԱՆԻՍԻՍԻ միւս կողմից աւելացնում է «Դեռ զրաբարն երկայն ատեն իւր պատշաճ սահմանին մէջ պիտի մոզէ հայուն ուշն և ուրուշը»⁹⁾:

Թէպէտ զրանց պատասխանողների թիւն էլ շատ

⁷⁾ «Մերու Հայաստանի», 1881, № 119:

⁸⁾ «Քննական քերականութիւն», 1866.

⁹⁾ «Հանդէս ամսօրեայ», 1902, № 1. եր, 13:

մեծ է, բայց ես, թողնելով երկրորդական ու պատահական գրողները, կբերեմ յայտնի հայադէտներին կարծիքները:

ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ (որ մի ստիպողական հանգամանքից զրգված, զրաբար է գրում) ասում է. «Քաջայայտ է ապաքէն, թէ հին լեզուն մեռեալ է և զնի ի խորս գերեզմանի, ըստ որում չունի կեանք և կիրառութիւն յընկերական կենցաղս... Բայց գոնեան, պահպանել զայն պարտ էր, ասեն իմաստունքն հայոց. և մէք ասեմք. կացցէ և մնասցէ զա անդ, ուր էն, այսինքն՝ կապեալ և կալանաւորեալ յիւրում զարաւոր գերեզմանի, զի զորա չէք տեղի ի կենդանեացն աշխարհի»¹⁰⁾:

Եւ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑ, թէ «...Մեր հայկազեան հնութիւնը յարուցանել գերեզմանից կարելի չէ ոչինչ կախարդական գաւազանի հարմամբ (զարկով)»¹¹⁾: Եւ մէկ ուրիշ տեղ «...հին լեզուն մեր ժանկոտեալ մինչ իսպառ և անհասկանալի ժողովրդեան, ուրեմն և անպիտան իբրև գործի հասարակաց լուսաւորութեան»¹²⁾:

ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶԵԱՆ. «Ներկայ դարի կիսում մեծ յիդափոխութիւն առաջացաւ մեր կեանքի մէջ. երեք ախոյեան (Խ. Սբովիան, Ս. Նազարեանց, Մ. Նալբանդեան), որքերուած ամէնաազնիւ ձգտողութիւններով՝ հրատարակեցին, որ զրոյց լեզուն այլևս

¹⁰⁾ «Հանդէս գրականական և պատմական»:

¹¹⁾ «Ibid, 1888, № 1, սր. 246»:

¹²⁾ «Լուծայ», 1901, սր. 286»:

անընդունակ է լուսաւորութեան գործի լինել և թէ զորա տիրապետութիւնը միայն ահագին վտանգ կարող է բերել ապագային: (Նրանք իրանց) չափած ու կշռած կրիտիկական յօդուածներով հարկադրեցին զրաբարին զէնընկէց լինել ժամանակի հոսանքի առաջև... Նոքա, որոնք պաշտպանում են զրոյց լեզուն, որպէս աւելի յարմարաւոր գործի քան թէ աշխարհաբարը, դորանով կարող են միայն մի նոր պարադօքս մտցնել մեր բանականութեան պատմութեան մէջ: Կրկնում ենք բարձրաձայն, որ աշխարհաբար գրականական լեզուն նպատակ է, իսկ զրաբարը և միւս բարբառները՝ միջոց, այս պատճառով սոքա բոլորը պիտի սպասաւորեն նորան, որպէս վաստալը իւր իշխանապետին»¹³⁾:

Գ. ԽԱՏԻՍԵԱՆ. «Վերջնականապէս վճռուած էր, որ զրաբառն անպէտք է գրական նպատակներին... Այն լեզուն միայն կարող է տարածուել, որ համապատասխան ներքին արժանիքներ ունի և ժողովրդի կեանքի շրջանառութեան մէջ ազդու կերպով մասնակցում է»¹⁴⁾:

ՊՐՕՖ. Ք. ՊԱՏԿԱՆԵԱՆ. «Մ շարի սկզբում, ք. ճ. յետոյ, տոհմային հայական այբուբենի հետ միաժամանակ բեմ զուրս եկաւ մի զրական — պաշտօնական լեզու, որ այն ժամանակից մինչև անցեալ դարի վերջը բռնութեամբ իշխում էր գրականու-

¹³⁾ «Ամառնային նամակներ» 1897, սր. 194, 196»:

¹⁴⁾ «Վտակ», 1901, սր. 319»:

թեան մէջ, որ և այդ պատճառով կոչվեց *Գրաբար*, *Գրաբար լեզու*»¹⁵⁾:

Հ. Գ. ԶԱՐԲԱՆԱԼԵԱՆ. «...նոր լեզուին՝ ազգային կրթութեան արդէն մատուցած կամ ասկէ ետքը մատուցանելի կարեւոր ծառայութիւնը ժխտելը, Հին լեզուին դառնալ կամ ազգը դարձնել ուղելը նոր լեզուները խափանելու համար, ընդունայն ու վնասակար ջանք մը պէտք է սեպուի»¹⁶⁾:

Հ. Ա. Վ. ԱՅՏԸՆԵԱՆ. «Ծնանիլ, ապրիլ իւր նմանը առաջ բերիլ և մեռնիլ, ասոնք են մարդկութեան և անոր շատ իրողութեանցն էական վայրկեանները: Մարդկային խօսողութեան գործիքը, լեզուն, ան ալ հարկաւ այս չորեքպատիկ անցքերէն կանցնի... Մեռնալ լեզու գործածողը՝ միայն իւր անձնական ջանքէն կառաջնորդուի, այսինքն քայլը քայլին ճիշտ հետեողութեամբ, վասն զի ալ իրեն համար անգործունեայ է ժամանակը, որուն նաև չարաչար ազդեցութեանցը հետ անդադար կռուոյ մէջ ըլլալու է:

Հայրենասիրութեամբ և ազատութեան ողով տածած, ներքին և արտաքին կռիւներով և յաղթութիւններով ոյժ առած, բնիկ ազգային արժանապատուութեան վեհ զգածմամբը հատու առողանութիւն մը ստացած, օտարաց աւարաւը ձօխացած, անթիւ հոյակոպ մատենագիրներէ կատարելագոր-

¹⁵⁾ «Материалы для изучения армянскихъ нарѣчій», 1875, Եր. VIII:

¹⁶⁾ «Պատմութիւն հայերէն դպրութեան», 1878, Եր. 87:

ծուած, հետզհետէ առած ձևերովը, զարդերովը, իմաստից հոծութեամբը՝ տիեզերակալ «[Թագաւոր ժողովրդեան] վայլոյ պերճութեամբը՝ լապիս լեզու կիրեար թէ յաւիտենական պիտի մնար: Սակայն ինկաւ, և ինկաւ ուրիշէ մը չգրգուած... Զուր ջանաց Կղաւզիոս մը բովանդակ կայսերական իշխանութեանը զօրութեամբ այն անկման առջէն առնուլ և ամէն կողմէ մատուցուած ամուր նեցուկներուն ու թումբերուն անբաւականութենէն տեսնուեցաւ եկած հաստծ հոսանքին բռնութիւնը: Նարեկաւոր տարիներ անցուց այն պերճ լեզուն, կենաց և մահուան մէջտեղը կրեբալով, մինչև վերջին շունչը տուաւ Թ. և Ժ. դարերուն մէջ:

Ասկէ տարբեր չէ յայտնելի ալ բախտը, այն Հին և նոր մարդկութեան համաշխարհական անմահ լեզուին: Ոչ խօսող գրող ու սորվող միլիոններուն բազմութիւնը, ոչ բիւրազգի մատենաներուն անբաւ զանգուածը և ոչ բազմաթիւ (բանաստեղծական) դպրոցներու արդիւնքը կարող եղաւ նորութեան հեղեղին առջև դիմանալ, երբ որ ժամանակն հասաւ. և նոյն Թ. ու Ժ. դարերու միջոցն ասոր ալ կարծեցեալ անմահութեան պատրանքը վերցրնելու և աչուրները խփելու որոշուած էր:

Նոյն էր մեր Հին գրաւոր հայերէնին ալ կարճատե կենացը կատարածը: Սակայն անտարակոյս ասոր բախտն ամէնէն աւելի ծանր պիտի դայ զեղեցկասէր Հայ սրտերու, որ օտար լեզուաց եղերական վախճանին կցորդ եղաւ՝ առանց անոնց բարեմասնու-

թեանցը լիով մասնակից ըլլալու. երբ որ գեղեցիկ ձիրքերու լուծեանն ու յաջողեալ գործունէութեանը ժիր ընթացքին մէջ կանխեց տարաժամ օրհասն, ու խամրեցաւ ծաղիկը: Թ. և Ժ. դարերուն մէջերը հայաստանեայց հին լեզուն ալ մեռեալ լեզուաց կարգն անցած տեսանք իր պատմութեանը մէջ:

Սյսպէս յոյն, լատին և հայ դասական լեզուները մէկտեղ ապրեցան և մէկտեղ մեռան, նոր աշխարհի առջև հոյակապ հնութեան մէյմէկ սքանչելի յիշատակարան թողլով իրենց ցանկալի մնացորդները»¹⁷⁾:

Դ. Ա. Վ. Բ. Ե. Ս. «Լեզուների կեանքում յայտնի է բառերի Բեռնեյու պրոցէսը, որ սկսվում է նրանով, որ բառը կորցնում է իր որոշ իմաստն ու նշանակութիւնը, դառնում է որոշ հասկացողութեան ձևի ածականական նշանը. սրա վրայ են հիմնված մեր հօրվումներն ու խոնարհումները, այն բոլոր հասկացողութիւնների ձևերը, որոնք արտայայտվում են գոյականներով, ածականներով և այլն: Սյս պրոցէսը առաջ է գալիս բոլոր լեզուներում և նրանց ներքին պատմութիւնն է հանդիսանում, իբրև մի զուգահեռական՝ հնչական փոփոխումների արտաքին պատմութեանը»¹⁸⁾:

Հ. Ս. Վ. Տ. Բ. Վ. Ե. Ս. «Ծնունդ էթէ կայ՝ մահ ևս կայ: Արդ էթէ մարդ փոփոխական է, ի՛նչպէս

17) «Բնական քերականութիւն», 1867:

18) «Языкъ животной и умственной жизни.» Воронежъ, 1865, Կր, 24:

կարելի է որ իւր լեզուն անփոփոխ մնայ, ուստի և անմահ: Սյո՛, մարդուն պէս լեզուն ալ՝ զօր կը գործածէ, մահապարտ է... Սակայն անգրգռելի կմնայ միշտ սա ճշմարտութիւնը՝ թէ լեզուի մը հին գրականութեան մէջ պահած անմահութիւնը մեռելապատկեր մահատիպ անմահութիւն մըն է, որ միշտ զուրկ է կեանքէ, վասն զի չի խօսուիր...:

Սյո՛, լեզու մը որպէս զի կարենայ կենդանի համարուիլ՝ անպատճառ խօսուելու է: Սյժմ էթէ ուզենք մեր խօսքը հին հայ լեզուին վրայ դարձնել, անոր համար ալ պիտի ստիպուինք ընդունիլ թէ այլ ևս մեռած է, վասն զի չի խօսուիր:

Կարծենք չկայ զրագէտ մը, որ մեր հնակեաց լեզուին կենսազուրկ վիճակին վրայ այլ ևս կասկած ունենայ: Զի գտնուիր հայագաւառ կամ հայաքաղաք մը, ուր գրականութենէ մեզ ծանօթ հայ լեզուն խօսուիր»¹⁹⁾:

Հ. Ս. Վ. Ա. Յ. Ը. Ն. Ս. «Հին լեզու մը նոր աշխարհքի համար իւր գեղեցկութենէն զատ հրապոյրք մը չունի... խնդիրը զուտ գործնական է, այսինքն չենք փնտուեր թէ որ լեզուն կը սիրենք բանեցընել, այլ թէ որը կը հարկադրինք գործադրել, և որով կրնանք ապրիլ»²⁰⁾:

Լինելով նոր լեզուի գրականութեան համար մեռած՝ գրաբարը, սակայն, երկու տեղ մի կերպ դեռ

19) «Բազմավէպ», 1892, Կր. 5, 6:

20) «Բնական քերականութիւն», Կր. 255:

քաշ է տալիս իր անուանական գոյութիւնը.—եկեղեցում, իբրև պաշտամունքի լեզու և հոգևոր ատեաններում, իբրև պաշտօնական լեզու: Բայց ոչ մէկում նա չէ կարողանում տիրապետել լիովն որովհետև երկուսումն էլ կենդանի մարդիկ, միմեանց հասկանալու համար, գործ են ածում կենդանի լեզու: Եկեղեցում քարոզը կամ «կենդանի խօսքը» տրվում է նոր լեզուով, նոյն լեզուով էլ ատենական ծառայողները խօսում են հոգևոր ատեաններում: Երկուսումն էլ գրաբարը լի է լեզու է: Այդ լեզուով եկեղեցում կարգում են, բայց չեն խօսում: Հոգևոր ատեաններում գրում են, բայց չեն խօսում:

Եղած գրաբարն էլ պատւի մէջ չէ: Մեր այժմեայ հոգևորականութիւնն այլ ևս գրաբար չէ կարգում, այդ պատճառով էլ այսօր եկեղեցում հոգևոր ծառայողների մի ահագին բազմութիւն ունենք, որոնք գրաբարը չեն կարողանում վարժ ու հասկանալի կերպով կարգալ: Իսկ հոգևոր ատեաններում գրում են գրաբարացրած աշխարհաբարով կամ, եթէ ուզում էք, աշխարհաբարացրած գրաբարով: Անհասկանալի լինելու չափ անբնական է և այն հանգամանքը, որ մեր գործակալներն էլ իրանց ստորագրեալ քահանաներին ու միւս պաշտօնեաներին, նրանք էլ առաջիններին իրանց գրաւոր ղեկավարներն անում են ճշմարիտ լեզուով:

Մակայն, եթէ համոզված ենք, որ գիտութիւնը երբէք յետ չէ գնալու, կանգ առնելու էլ տրամադիր չէ, պարզ է, որ ոչ շատ հեռւոր ապագայում,

վերջին հիմնարկութեան մէջ իշխող լեզուն դառնալու է նոր, կենսաթրթիւ լեզուն: Հոգևոր ատեանը, անշուշտ, միշտ չն կարող արհեստական կերպով պատուարներ կանգնեցնել աշխարհաբարի հեղեղների առաջը: Եւ դրա նշաններն արդէն երևում են: Ժողովուրդը իր «խնդիր»-ները մեր հոգևոր ատեաններին ներկայացնում է աշխարհիկ լեզուով, և դա մի աչքի ընկնող բան չէ՝ նկատվում, ժողովուրդի քայլը բնական է համարվում:

II. ԼԵԶՈՒՆ ՄԱՔՐԵԼՈՒ ԶԱՆՔԵՐ.

Սակայն, թէպէտ հին լեզուն մեռած էր արդէն և մի քսան տարի առաջ նրան նոր շունչ փչելու մասին կարող էր յոյսի որ և է փշուր մնացած լինել, այսուամենայնիւ այսօր ոչ միայն նրա մահը տարակոյս չվերցնող մի ճշմարտութիւն է, այլ և լոյսի պէս պարզ է, որ ժառանգը արդէն մտել է իր բոլոր իրաւունքների մէջ: Հայի լեզուաշինութեան գործի երրորդութիւնը յանձին Աբովեանի, Նազարեանցի ու Նալբանդեանի, այնպէս կուռ ու պինդ էր դրել նրա հիւքը, որ Պատկանեան, Պռօշեանց, Աղայեանց ու Բաֆֆի որ և է դժուարութեան չհանդիպեցին նրա պատերը բարձրացնելով: Եւ մենք մի քանի տասնեակ տարիների ընթացքում ունեցանք մի լեզու, մի կենդանի՝ լեզու, որ դեռ երէկ էր, որ աչքներէս առաջ կազմակերպվեց, և որ ապրելու, զօրանալու ու զարգանալու մեծ յոյսեր է տալիս խոր կերպով դիտողին:

Ո՞վ էր ներկայ նրա երկունքին, ո՞վ՝ վկայ նրա ծնունդին, ո՞վ զգվեց նրա մանկութիւնը, բայց մենք արդէն վայելում ենք նրա կենսութիւն պատանի-

ութիւնը: Եւ մեր նոր լեզուն՝ իր նոր-նոր շէնքերի շատանալովը մեծացող քաղաքի պէս, որ մի՛ տարում այնքան է ընդարձակվում, ինչքան առաջ տաս տարում,—տեսնում ենք այսօր ոչ թէ տասնեակ տարիներով, այլ տարեց տարի հասակ առնելիս: «Այժմ մեր գրական լեզուն—ասում է Ս. ՇԱՀԱԶԻԶԵԱՆ—բաւական պարզուել է և օրեցօր կատրիլադործվում է, մասամբ դաւառականի կենդանի ձեւերը փոխ առնելով և մասամբ կանոնաւորուելով հմուտ գրողներից և թարգմանիչներից, որոնց թիւը այժմ համեմատաբար շատ և շատ գերազանց է անցեալից»²¹):

Թէպէտ մեր այժմեայ գրողներն ու մրողները իրանց անտարբերութեամբ ու անգիտութեամբ մեծ մասամբ մթնեցնում են լեզուի մաքուր պատկերը, աւելորդ ու անպէտք ներկեր մտցնելով նրա մէջ, որ հեշտ կարող է նկատուել նրա առաջը կանգ առնող ամէն շահագրգռվող, սակայն չեմ կարող չխոստովանել, որ միւս կողմից, իհն շատ աննշան քանակութեամբ, վարպետ գրողներ էլ կան, որոնք մի-մի նոր ու, ասես թէ, լրացնող զիծ մտցնելով այնտեղ, կանոնաւորում, շնչաւորում ու առանձին տեսք են տալիս նրան: Մեր այսքան անփոյթ «խզըզողների» շարքում դուք երբեմն կհանդիպէք մի-երկու այնպիսի փութկոտ գրողների, որոնք ուրազն ու հարթիչը, քանոնն ու անկիւնաչափը ձեռքներին՝ ամենայն լրջութեամբ մտտենում են խօսքի իւրաքանչիւր բառին, բառի իւրա-

21) «Ամառնային նամակներ», 1897, եր. 186:

քանչիւր վանկին և վանկի իւրաքանչիւր գրին ու շեշտին, և հեռատեսութեամբ չափում, ձեռում, զգուշութեամբ տաշում, քերում ու վարպետութեամբ հարթում, կոկում են: Եւ, ձեր առաջը դնում են մի նախադասութիւն, մի պարբերութիւն, մի հատուած ու յօդուած, որ իր սիրուն կազմ ու կազմուածքով պատիւ կարող է բերել ամէն նոր լեզուի:

Համոզվելու համար, բաւական է ուշադրութեամբ կարդալ մեր օրաթերթերն ու ամսաթերթերը: Ահա այդ առիթով «Արևելեան մամուլի» գովքը Նորայրի «Ճայկական բառաքննութեան» մասին: «Իւր միակ մոլութիւնն և զակօտումն՝ իւր հայրենի բարբառն է. անոր մէն մի քարը, մէն մի բեկորը, հողակոյտը խեղերանքն անգամ, ըսեմ, իրեն համար սիրելի և սրբազան աւանդներ են, ցոյց կուտայ անոնց ամէն մէկուն վրայ մասնաւոր գութ և մտազրութիւն, զի աներկրայելի է որ եթէ անոնց վրայի գօսն ու բորբոսը սրբուին և մաքրուին, կրնան իրօք դառնալ և լինել պիտանացու: Ուստի չխնայէր իւր ամէն ճիգն ի գործ դնել՝ սրբելու զայն և յղկելու»:

Եւ, տեսնելով այդ սակաւաթիւ գրողների խնամքով վերաբերումը, որ նրանք ցոյց են տալիս լեզուաշինութեան վսեմ գործին, մի քանիսի էլ բժախնդրութեան հասնող բարեխղճութիւնը, ես համոզված եմ, որ այնքան բազմաթիւ մրողները չեն կարող փչացնել գործը—քանի որ նրանց դէմ էլ պատուար կանգնեցնելու հնար կայ—, ինչքան սակաւաթիւ գրողնե-

րը կշինեն ու կարող են շինել: Չէ՞ որ ամէն գործ իր գնահատութիւնն ունի, ամէն ապրանք՝ իր արժէքը: Եւ մինչդեռ անփոյթ՝ և խիստ քննադատութիւնից ապտակված գրուածքները կմնան նոյն իսկ անթղթատելի, խնամքով յօրինված ու վարպետ գրչի տակից դուրս եկած երկերը սրտի ամէնալաւ անկիւնն ու դարանի ամէնաաչքի ընկնող տեղը կգրաւեն:

Բայց գրական գործը չպէտք է բաւականանայ սակաւաթիւ լաւ գրողների արտադրոյթներով: Նա ինքը պէտք է խիստ ու բազմակողմ քննադատութեան ենթարկի ամէն մի երկ, ինչքան էլ վերջինը, ըստ երևոյթին, փոքր ու սակաւարժէք գործ լինի, և այդպիսով մորեկի պէս շատացող մրողների էնէրզին չափաւորի, և անպէտք ու յաճախ անորակելի գրուածքներին հեղեղի առաջը ամբարտակներ կանգնեցնի: Սյո՞, խիստ և նոյն իսկ անողորմ քննադատութիւնը, վերահատի սուր դանակի պէս, արմատից պէտք է կտրի գրամոլութեան ախտը, մաքրելով այդպիսով գրական ասպարէզը թէ՛ մտքի և թէ՛ մանաւանդ լեզուի աղտերից ու աղբերից:

Սկսած այն արժանայիշատակ ժամանակից, երբ նոր լեզուի կամ աւելի ճիշտ՝ զաւառարարբառի հիմնադիր անմահ Արովեան²²⁾ ժողովրդական լեզուի կապերն արձակեց, և կէս-համարձակ, կէս-վախկոտ

²²⁾ «Բայց մեր ժողովրդական գրականութեան գոյութիւնը վերագրել նրան (Արովեանին) — գրում է Յովհաննէս Շահնազարեան, — ասել թէ նա լեզու է ստեղծել, գրականութիւն

կերպով հրապարակի վրայ դրեց «Հայաստանի վերքը», սպասելով կարդացողների դատաստանին, մեր նոր լեզուն, մինչև քաղաքացիութեան իրաւունք ձեռք բերելը, շատ ու շատ փոփոխութիւնների է ենթարկվել թէ՛ արտայայտութեան ու բառակազմութեան, թէ՛ քերականական, ուղղագրական ու շեշտադրական և թէ՛ առհասարակ հասակ առնելու կողմից: Յիսուն երկար ու ձիգ տարիների ընթացքում նա անցել է շատ բնաշրջաններ, տպաւորվել է շատ ազդեցութիւններից, կրել է շատ կնիքներ: Այս պատճառով, թէ՛ հանրապէս նրա անցած ճանապարհը ցոյց տալու և թէ՛ մասնապէս, շահագրգռվողների առաջ մի լեզուային վիճակագրական աղիւսակ դնելու համար, ար-

է ստեղծել, — դա ձիշտ է» («Խաչատուր Աբովեանի հասարակական և գրականական գործունէութիւնը» 1899, եր. 18):

Բայց լեզու ստեղծելու միտքը Աբովեանին տրվում է իբրև ժողովրդական գրականութեան կարապետի, պիտէրի: Ահա Մ. Աբեղեան՝ «Խ. Աբովեանի «Վէրք Հայաստանին» ժողովրդական լեզուի առաջին օրինակն է եղել, ահա կէս դարը լրանում է, որ միակն է մնում իբրև օրինակ Արարատեան բարբառի» («Նոր-Դար», 1890, № 141):

Եւ Տ. Մ. «Ինչպէս լայտնի է ամենին, գրաբարի անկումից յետոյ՝ աշխարհաբար լեզուի հիմնադիրներից առաջինը՝ մեր ժողովրդական աղքատիկ գրականութեան մէջ, ամենայն իրաւունքով-կարելի է հաշուել Խ. Աբովեան իւր «Վէրք Հայաստանի»ով. Աբովեան.. սկսել է գրել մի գաւառի մասնաւոր բարբառով որ սկիզբն դրեց մեր այժմեան գրականական լեզուին» («Բազմավէպ», 1898, եր 174—175):

Այլ և Ղ. Աղայեանը՝ «Աբովեանցը ո՛չ միայն մեր նորագոյն գրականութեան ծանապարհը հարթեց մեզ համար, ոչ միայն քա-

ժէ՛ր ձեռքի տակ ունենալ մեր կէս-դարեան նոր գրականութիւնը կամ գոնէ նրա բնաշրջանները բնորոշող երկերը, որ կարելի լինէր, լեզուի կեանքով ապրելով, այդ կեանքի զլխաւոր մօմէնտները տեսնել: Այդ հանգամանքը կպարզէր մեզ և այն, թէ ո՛ր գրողը, ո՛ր հեղինակը ի՛նչ կողմով ու ո՛ր աստիճան ազդեցութիւն է ունեցել լեզուի կազմի ու կազմակերպութեան վրայ. ուրիշ խօսքով, թէ ո՛վ ի՛նչ տուրք է պցել լեզուաշինութեան գանձանակը²³): Իսկ կարևոր է նոյն իսկ լեզուի կենսագրութեանը, նրա պատմութեանը: Եւ դրա միակ յարմարութիւնը առայժմ, անշուշտ, մեր Մխիթարեան միաբանութիւններն ունեն:

դաքացիութեան արտօնութիւն տուաւ աշխարհիկ լեզուին, որ մինչև այն ժամանակ կիսագրաբարի ստրուկն էր, այլ և..» («Աղբիւր», 1888, եր. 58):

Եւ իսահակ Յարութեան՝ «Խաչատուր Աբովեանը Թափանցեց բուն ժողովրդի սիրտը և իւր հայրենասիրական զաղափարներով տոգորուած «Վէրք Հայաստանին» գրելով՝ աշխարհաբար գրականութեան հիմնադիրը հանդիսացաւ» («Լուծայ», 1902, № 1, եր. 205):

²³) Այս կէտի վրայ առանձին ուշք է դարձրել և՛ լեզուագէտ Սարգիս Սարգսեանց իր «Արդի գրականութեան լեզուն և նրա քերականութիւնը» խորագրով անտիպ աշխատութեան մէջ, որտեղ եզրակացութեան մէջ ասված է, «III. Հատուածներ 19-դ դարու առաջին կիսի գրականութիւնից և IV. 19-դ դարու երկրորդ կիսի գրականութիւնը.. 1) արձակը—իւր բոլոր տեսակներովը, 2) ջափաբերականը—իւր բոլոր տեսակներովը: Այլ և առանձին անձնաւորութիւնների նշանակութիւնը և դերը գրականական լեզուի ստեղծման և մշակման գործի մէջ» («Տարագ», 1893, եր. 166):

Բայց ի՞նչ վիճակի մէջ է այսօր մեր լեզուն հանրապէս:

Խառնակ ու շփոթ վիճակի մէջ: Գրում ու տպում է ո՞վ ասես, ի՞նչ ուզես, ի՞նչպէս կամենաս: Հիմա գրելու համար ոչ ընդունակութիւն է պահանջվում, ոչ առանձին պատրաստութիւն: Բաւական է, որ կարողանաք մտքերն իրար կողքի շարել, — այնուհետև ձեր գիտեանլիքն է: Եւ այս պատճառով, ո՞վ կարող է ամէնաշատը լաւ կարգացող լինել, յաւակնութիւն ունի գրող լինելու: Իսկ զրա հետեանքն այն է, որ մենք մեր գրքերում հանդիպում ենք ամէնատեսակ լեզուների, բայց ոչ հայերէնի: Հիմա մենք գրում ենք վրացի-հայերէն, ռուս-հայերէն, մինչ անգամ Ֆրանս-հայերէն, որոնց մէջ զ՞ուր կփնտռէք զ՞ուտ հայերէնը:

Հիմա մենք գրում ենք հայ գրերով ու հայ բառերով, բայց ոչ՝ հայ լեզուով: Սրա պատճառն ի՞նչ է: Պատճառն այն է 1), որ մենք ծանօթ չենք մեր լեզուի ոգուն կամ անտարբեր գրողների շնորհիւ դրսևած ենք այդ ոգին մոռանալու հանգամանքում, եթէ արդէն մոռացած չենք, և 2), որ, հեռեապէս, հեշտ ենք ենթարկվում օտարի ազդեցութեանը: Եւ այդ ազդեցութիւնը յաճախ այն աստիճան խորն է լինում վրաներս, որ ոչ միայն թարգմանելիս, այլ և մեր սեփական մտքերը, մեր ինքնատիպ արտադրոյթները դուրս են գալիս ոչ-հայերէն:

Գրելիս մենք չենք մտածում, որ հայի համար ենք գրում, հայի, որ իր՝ մտածելու, վերարտադրելու և

իւրացնելու սեփական եղանակն ունի: Ոչ միայն ողջ պարբերութիւնը, ոչ միայն ամբողջ նախադասութիւնը, այլ և նախադասութեան որ և է մասը, եթէ այնպէս չէ կազմված, այնպէս չէ դասաւորված, ինչպէս պէտք է, յաճախ, եթէ որ և է բառ իր տեղը չէ դրված, նա, հայ կարդացողը, ստիպված է խզել իր մտապատկերների կապը, և ցանկալի տպաւորութիւնը չստացած, կանգ առնել վարանման մէջ: Բերել փաստեր ասածներին հաստատութեան համար (և քանի՞ քանի անգամ եմ բերել ես այդ փաստերը), — չեմ կարծում, թէ ո՞վ և է ստիպի ինձ: Չէ՞ որ մեր զրականութիւնը, բաց նամակի պէս, ամէն ցանկացողի առաջն է: Առէ՛ք, որ զիրքը կամենում էք, քննեցէ՛ք, ում լեզուն ուզում էք — և դուք կտեսնէք, որ փաստերի ու ապացոյցների ամբողջ կոյտեր ունէք առաջներդ: Ես բացառութիւն չեմ համարում նոյն իսկ մեզնում յայտնի կամ յայտնի համարված գրողներից շատերին:

Ո՛ւր կտանի մեզ այս՝ գիտունների կողմից անտարբերութիւնն ու տգէտների կողմից անսանձութիւնը, ո՞ւր, եթէ ոչ՝ դէպի լեզուային մի քասօ: Մաքուր, կանոնաւոր, լաւ մշակված, կարգին կազմակերպված լեզուն մի ուժ, մի հարստութիւն, մի գանձ է նրան գործ ածող ժողովրդի ձեռքում, լուսաւոր ազգերի առաջը նրան ներկայացնող զխաւոր տարրն է և նրա անցեալի պատմութիւնը, կենդանի պատմութիւնը, նրա ներկայի յայտարարը:

Ու մէկ այսպիսի ծանր ժամանակ, երբ չկան այլ

ևս մեր Գաղտնիքը, որտեղ զարբնվում էր մեր լեզուն. երբ լեզուի տարածմանը նպաստող մեր հրատարակչական միակ ընկերությունը անախրոստիստ է. երբ մեր լեզուն հայ ընտանիքներից վճռովելու վրտանդի մէջ է. երբ հայ կինը, հայ մայրը, հայ օրիորդը սկսում է ասօ՛ր համարել իր մայրենի լեզուով խօսելը. երբ, վերջապէս, լեզուն միմիայն գրեթէ մէջ է մնացել, — դա ամենաքիչը մի ապացոյց է, որ նրանով խօսող կամ նրա տէրը համարվող ժողովուրդը շատ վայրենի հասկացողութիւն ունի իր տոհմային արժանապատուութեան մասին: «Ի պատիւ թիւրքահայերի — գրում է ԼէՕ — մենք պիտի խօստովանենք, որ նրանց մէջ հայ կինը կարողացել է տաղանդ ցոյց տալ: Պատճառը պարզ է: Հայոց լեզուն թիւրքահայ հայ ընտանիքում այնպէս չէ արհամարհուած, ինչպէս ուստահայ ընտանիքներում»²⁴):

Կարելի է, աւարկողներ լինեն, թէ օտար գրականութեան, տիրապետող լեզուի ազդեցութիւնը այնքան մեծ է մեզ վրայ, որ ուզենք-չուզենք, պէտք է ենթարկվենք նրան: Որ այդ այդպէս է, որ ո՛չ մի ուրիշ լեզու էլ ազատ չէ եղել օտարի ազդեցութիւնից, որ նոյն իսկ մեր հին լեզուն կրում է իր վրայ յոյն ու պարսիկ լեզուների ազդեցութեան խոր հետքերը, ինչպէս գրում է և Դ. ԽԱՉԿՈՆՑ՝ «Հայերէն դասական լեզուն բազմաթիւ փոխառեալ բառեր ունի յունարէնէ, արամերէնէ ու արաբերէնէ»²⁵), —

²⁴) «Մուրճ», 1901, №6, եր. 287:

²⁵) «Ընդարձակ օրացոյց», 1902. Կ. Պոլիս.

դրա դէմ խօսք չի կարող լինել: Բայց որ միւս կողմից՝ մեր զգուշաւոր վերաբերումով, մեր բծախնդիր հայերէնասիրութեամբ ու լըջութեամբ՝ հասկացողներս, գիտակներս, կարող ենք այնպէս անել, որ լեզուային օտար ու խորթ տարրեր մուտք չունենան մեր լեզուում, — դա անկարելի բան չէ:

Իրա համար արժէ, որ մարդ ինչքան թանգ է գնահատում այն նիւթը, որի մասին գրում է, այնքան էլ թանգ ու խորհրդաւոր համարի այն լեզուն, որով ուզում է այդ նիւթը ուրիշ սեփականութիւնը դարձնել: Նայ լեզուն հայ ոգու և հայութեան մէջ պահելու համար՝ ուրիշ բան չէ պահանջվում: Իրելու, փոխադրելու, թարգմանելու առաջին ու գլխաւոր պայմանն է, որ գրածը, փոխադրածը, թարգմանածը անպայման հայերէն լինի: Բառերը կարող են լաւ, մաքուր հայերէն չլինել, բայց լեզուն, բայց բառերի ներքին կապն ու յարաբերումը, բայց հանուր միտքն ու իմաստը անպատճառ հայերէն պէտք է լինեն: Թող զոգտրիկ, թող սիրուն չլինեն նախադասութեան մասները, թող տէխնիկի կողմից մի քիչ կաղայ լեզուն, բայց մտքի արտայայտութիւնը հայերէն պէտք է լինի:

«Մի գրականութիւն — գրում է Տ. Մ. —, որ դուրս է քաշում ժողովուրդին իւր նահապետական զիջքից՝ տանելով նորան դէպի բարձրը, դէպի ազնիւր, բայց ոչնչացնելով նորա սեփականութեան ամենաէականը, բոլորովին կերպարանափոխելով նորա ոգին, փոխելով նորա մտածողութեան եղանակը,

վերջապէս, մի՛ խօսքով՝ հայ միաբը տանելով օտար ուղղութեամբ, ո՛չ թէ նա կատարած կլինի մի գեղեցիկ գործ, այլ ուղղակի մի դահճի դեր. որովհետեւ նա մեռցնում է այն՝ ինչ որ մի ազգութեան յատկանիշն է կազմում: Մի լեզու ո՛չ մի գնով չպէտք է կորցնէ իւր ինքնութիւնը: Նա այն սրբութիւնն է մի ժողովրդի համար, որ իւրաքանչիւր անձնաւորութիւն, որ նորա անդամն է կազմում, իւր բարձր պարտականութիւնը պիտի համարէ ամենայն վրէժխնդրութեամբ պահպանել նորա էական մասը, այն է՝ ոգին, և թոյլ չտալ երբէք որ մի օտար ձեռք ապականէ նորան»²⁶):

Ուրիշ բան է, երբ մարդ մի լրագրական յօդուած է գրում: Թէ և հրապարակային թերթում տպւող մի գրուածք կարող է այնքան էլ լուրջ վերաբերման խիստ բովից անցած չլինել — թէպէտ շատ ցանկալի է, որ անցած լինէր —, այսու ամենայնիւ, եթէ գրողի կողմից ներելի է որ և է թոյլ վերաբերում, միմիայն թերթերի՛ մէջ է ներելի: (Սնշուշտ, սրանով չեմ ուզում ասել, որ հրապարակային թերթը հաւուր առմամբ խիստ չպէտք է վերաբերվի լեզուի շահերին:) Իսկ գիրքը կամ գրքոյկը, իբրև մնայուն բան, պէտք է ո՛չ միայն խօսելիս լինի բուն հայ լեզուով, այլ և նպաստող լինի հայ լեզուի շինութեանը, այլ և այդ լեզուն սովորեցնող, տարածողը լինի:

²⁶) «Բազմավէպ». 1898, նր. 276, 277:

III. ԼԵԶՈՒՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ՈՒ ԴՊՐՈՑՈՒՄ.

Իրան, ի՞նչ ասպարէզներում է տեղի ունենում այսօր մեր լեզուի Ֆարսիկասիօնը, որոնք են մեր լեզուի դարբնոցները:

Մեր լեզուն կազմվում ու կերպաւորվում է մեր ժողովրդի օջախում, մեր գուտ հայ ընտանիքում գլխաւորապէս: Սակայն, չնայելով, որ բոլոր ազգերի մէջ էլ լեզուի հիմքը ընտանիքում է դրվում, բայց որովհետեւ այսօր մեր ո՛չ միայն գրական լեզուն, այլ և ժողովրդականը, կենտրոնից հեռու ապրող հայերի մէջ նոյն իսկ տեղական բարբառները, այլ ևս մուտք չունեն հայ ընտանիքներում, և հայերէն խօսելը մեր ժամանակի հովերով բռնված հային մի քիչ անյարմար է գալիս, սաղ չէ՛ գալիս, քանի որ մօզն ու կեղծ, թքով կպցրած լուսաւորութիւնը, նրա կարծիքով, ուրիշ բան են պահանջում ժամանակակից հայից, — պարզ է, որ այսպիսի պայմաններով ու այս խելքով ապրող ու իրանց զուակներն ապրեցնող հայ ընտանիքներից, հայ ծնողներից ոչինչ չի կարելի սպասել:

«Մեր յորդորը — գրում է Ա. ԱՐԱՍԻՍԱՆԵԱՆ, — որ մենք ուղղում ենք առ այժմ միայն ընթերցող

հասարակութեան և ոչ անգրագէտ ժողովուրդին—ընտանեկան գործածութեան համար բարբառների տեղ դնել մաքուր գրական լեզուն—այդ յորդորը, ուրեմն, ոչ միայն միայն միջոցն է մեր գրականութեան ապագան փրկելը—, այլ և միակ խնայան միջոցն է մեր գրական լեզուն ժողովրդական ոգով զարգացնելը:

Մենք աներկբայ ենք, որ գրական լեզուի մուտքը ընտանիքների մէջ, այսինքն գրական լեզուի մայրենի լեզու— դառնալը ունենալու է նոյնքան մեծ հետեանքներ, որքան մեծ եղան հետեանքները, երբ աշխարհաբարը գրական լեզու դարձաւ: Կատարեալ յանցանք է այսուհետեւ մանուկների ուղեղը յարմարցնել բարբառների, որոնք գրականութիւն չունին, որոնցով, ուրեմն, մեծացած հասակում չպիտի կարողանան մտաւոր սնունդ ստանալ: Դա նոյն իսկ քուլտուրական մեծ խնդիր է հայերիս համար»²⁷⁾:

Եւ գրական լեզուի զարգացման նախանձախնդիր Արասխանեան այդ խօսքերը գրում է այն ժամանակ, երբ հայերէնը հալածվում է հայ ընտանիքից՝ թէ՛ գրական լեզուի այդ լեզուն ու թէ՛ ժողովրդական... հասկանալի է, ուրեմն, որ եթէ բուն, հայաշատ ժողովուրդի մէջ իր մայրենի, հարազատ լեզուն՝ «ախորժ, ընտանի իմ հոգու համար» — այդ օրին է հասել, — ի՞նչ կլինի տարաշխարհիկ հայերի լեզուի հալը...

Լսենք Ս. ՇԱՆԱԶԻԶԵԱՆԻՆ. «Մեր հայերը, հայրենի երկրից հեռանալով օտար աշխարհներ, սեպ-

²⁷⁾ «Մուրճ», 1898, եր. 600 և 732:

հականում են և օտար սովորութիւններ. նոքա, այսպէս ասել, յետ կենալով ազգային բնաւորութիւնից, չեն կարող ֆիզիօլոգիական օրէնքի զօրութեամբ, միանգամայն ընտելանալ և ձուլուել օտար տարրերի հետ: Այստեղից առաջ է գալիս և մի անբնական երեղթ: Նոքա, նախանձելով եւրոպական սօցիալական կեանքի գերազանցութեան, աշխատում են քաղել դորա արտաքին կեղեք և ոչ դորա ներքին վերանորոգող իդէաները: Եւ ոչ մի բան այնքան չէ վնասում ազգային զարգացման, որպէս այդ արտաքին ձեւերի հեռեղութիւնը: Այս է պատճառը, որ մեր պատուական հայրենակիցներից շատերը, հեռանալով օտար աշխարհներ և սոցա դէն քցած փրշրանքը հաւաքելով, իսկոյն երեւակայում են իրանց եւրոպացի և մտածում են, թէ էս ի՞նչ հեշտ բան է եւրոպացի դառնալ. և երբ որ հարկը պահանջում է իւրեանց եւրոպականութիւնը արդիւնաւորել, նոքա էլի ընկնում են առաջվայ վիճակի մէջ և ապա աւելի ոխերիմ թշնամի են հանդիսանում ամենայն առաջադիմութեան: Այնուհետեւ դոքա իւրեանց չնչին սնամասութեան շնորհիւ միանգամայն հովանում են մայրենի լեզուից ու եկեղեցուց, ապա հաղիւ հազ սկսում են կմկմալ պապերի աղօթքը „Խրիստոս խարեաւ“, „Խայր մեր“²⁸⁾»:

«Եզիպտոսի և Ամերիկայի հայ գաղթականութիւնները հալուելու վրայ են, արդէն ամերիկացի և

²⁸⁾ «Յօրելեանի տարեդարձ», եր. 44:

եզիպտացի հայեր կան, որոնց համար հայերէնը խորթ լեզու է: Եւ եթէ այդ ազատ երկրներումն էլ հայը չէ կարողանում պահպանել իր լեզուն, առանց որի չէ կարող լինել ազգութիւն, — հասկանալի է, ուրեմն, թէ ի՞նչ կլինի նա այնպիսի տեղերում, ուր ամէն տեսակ արհեստական միջոցներ են ստեղծում՝ ազգութիւնները ոչնչացնելու համար»²⁹):

Օրբորդ ԵՂԻՍԱԲԷԹ ԱՂԻԽՈՆԵԱՆՑ. «Օտար լեզուով կրթելն ո՛չ միայն բթացնում է մանուկի հոգեկան ընդունակութիւններն, ինչպէս վաղուց հաստատել են գիտնական անձինք, այլ և, խորթացնելով մայրենի լեզուից՝ ազգայնապէս սպանում է նրան: Սյո՛, օտար լեզուով կրթելը ճշմարիտ որդասպանութիւն է. համոզուեցէք, հայրեր ու մայրեր, որ կրթելով ձեր որդիքը մայրենի լեզուով՝ աւելի լուսաւորուած կերեւիք օտարի աչքումը, քան թէ վայր ի վերոյ կրթէք նոցա օտար լեզուով: որովհետեւ ո՛վ կպատուի իրան, նա կպատուուի և՛ ուրիշից»³⁰):

Իսկ Ս. ՆԱԶԱՐԵԱՆՑ գրում է. «հայ ազգի տունը պիտոյ է և կարող է միայն շինուել նորա լեզուի շինութեամբ: հայն իւր լեզուն պարտական է համարել՝ իւր ամենասուրբ բանը, իւր աչքի լոյսը, իւր արտի արիւնը, իւր կենդանութեան հիմքը, իւր պատիւն ու պարծանքը»³¹):

²⁹) «Մուրճ», 1901, № 2, եր. 133:

³⁰) «Մեղու Հայաստանի». 1877, № 6:

³¹) «Հիւսիսափայլ»:

Սակայն, եթէ մեր գրական լեզուի զարգացման և հասակ առնելու օգտին մի բան լինում է, եթէ կայ մի տեղ, որտեղ լեզուաշինութեան պրօցէսը առաջ է գնում կամ կարող է առաջ գնալ գիտակցարար, պարտաւորապէս ու պաշտօնապէս՝ այդ, անշուշտ, մեր միջնակարգ դպրոցներն են ու ճեմարանները, այն էլ՝ եթէ միայն լեզու մշակողները կամ աւանդողները, ուսանող սերնդին լեզու, կանոնաւոր, մաքուր լեզու տվողները իրանց գործի վարպետն են և գիտակցում են, որ իրանց կոչումը ո՛չ թէ բառեր, ոչ թէ սառը քերականութիւն աւանդելն է, այլ լեզու դարբնելը, հայ երեխաներին ու պատանիներին իրանց լեզուի համն ու հօտը, նրա ուղն ու ծուծը, նրա էութիւնը հաղորդելն է: Իր բոլոր դասերի, բոլոր պարսպման ու զրոյցների մէջ, լեզուի ուսուցիչը, բացի նրա մեքանիսմը բացատրելուց, նրա շինուածքը ներկայացնելուց, պէտք է ձգտի լաւ հայերէնի ճաշակը տալ ուսանողին և նրան սիրելի անել իր լեզուն, որով միանգամայն հնարաւորութիւն կլինի տված նրան գիտակցարար վերաբերվելու իր առարկային: Եւ, եթէ նա աշխատի մեր նոր լեզուի բառարանը գաւառական նոր-նոր, կոկիկ ու նուրբ գաղափար արտայայտող բառերի պաշարով հարստացնել—պաշար, որ կարող են հետները դպրոց տանեղ զիւղացի և առհասարակ գաւառացի սաները—այն ժամանակ դրանով շատ զգալի զարկ կլինի տված լեզուի հայանալու ու հարստանալու գործին: Ս.հ.ս, ի՛նչ են գրում դրա առիթով՝

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳՕԶԱՆՃԵԱՆ. «Ժողովրդային լեզուն ստուգելու իր մէջ կպահէ շատ յատկանշական բառեր, շատ ինքնատիպ ու կենդանի բացատրութիւններ, և կարժէ որ անոնք պրպտուին ու երեւան հանուին գրական հրապարակի վրայ: Մեր տոհմային գրականութիւնն անոնցմով պիտի ճոխանայ և անոնց մէջ իսկ պիտի գտնէ այն ինքնասեպհական տարրերը՝ որոնցմէ գրեթէ զուրկ էր ցարդ, և որոնք պիտի տան իրեն զուտ տոհմային ինքնորոշ և առանձնայատուկ նկարագիր մը»³²⁾:

Գ. ԽՍՏԻՍԵԱՆ. «Որքան մեծ չափով ու շատ բարբառներից օգտուենք, այնքան աւելի մօտ կլինենք հանրահայկական լեզուի գաղափարն իրականացնելուն»³³⁾:

Ս. ՊՕԼԱՍՍՆԵԱՆ. «...Այժմ առհասարակ ընդունուած է մեզանում, թէ մեր բարբառներից պէտք է առաջ գայ մեր նոր գրականական լեզուն»³⁴⁾:

Ղ. ԱՂԱՅԵԱՆՅ. «Ազգն էլ թող հաւաքէ մեր բարբառները, թող հրաւիրէ գործին հմուտ մարդկանց և կազմել տայ մի հարուստ բառարան կենդանի բարբառների, որով միայն կենդանութիւն, ճոխութիւն և կանոնաւորութիւն կստանայ մեր ներկայ գրական լեզուն»³⁵⁾:

32) «Արևելեան մամուլ», 1897, եր. 587:

33) «Վտակ», 1901, եր. 311:

34) «Պատումիւն Հայոց գրականութեան», 1865, եր. 64:

35) «Տարագ», 1890, եր. 82:

Մ. ՆՍԼԲԱՆԴԵԱՆ. «Նոր լեզուի հիմնաւոր գիտութիւնը, նորա մշակութիւնը և ապագայ մտաւէտանբարդը³⁶⁾, առանց այդ գաւառական բարբառների օգնութեան՝ աներևակայելի է անգամ... Կան բառեր կամ ձևեր, որ արարատեան հայն է մշակել և կերպարանել. կան բառեր, որ վանեցին է մշակել կամ մշեցին. բայց ինչ հարկաւոր է այսպիսի ուժով կենդանների վրայ խօսել. շատ հոյակապ և հիշատակատու բառեր և ձևեր կան այս ու այն տեղ, նաև շատ փոքր հասարակութեանց մէջ, պէտք է այդ բոլորից էլ օգուտ քաղել խնամով և շրջանկաւ ընտրութեամբ»³⁷⁾:

«Թող ուրեմն, առաջ գան (Կ. Պօլսի) գաւառները, նրանք առանց այդ էլ շատ են ուշացել. վաղուց պիտի իրանց իրաւունքների տէրը դառնային: Գաւառները միայն լեզուային կենդանութիւն չէին բերի. նրանք կտային գրականութեան ժողովրդական գոյն, կբերէին և՛ նիւթի բազմութիւն, ստեղծագործութեան լայն ասպարէզ»³⁸⁾:

Պրօֆ. ԳՐԻԳՈՐ ԽՕԼԱԹԵԱՆՅ. «Նայ լեզուի և մասնաւորապէս սակաւ մշակուած գաւառական բար-

36) Մեր արևելեան ու արևմտեան կամ ուսմահայերի ու թիւրքահայերի բարբառները միացնելու հարցը, իմ կարծիքով, ժամանակի հարց է և ոչ արտաքին ազդեցութեան գործ: Դրա մասին, ի միջի այլոց, խօսել են՝ Գ. Խատիսեան, Միհրան Յովհաննէսեան, Յարոյ, Հ. Սարգսեան, Արշակ Զօպանեան...

37) «Հանդէս գրակ. և պատմ.», 1890, № 3, եր. 328, 350:

38) «Մուրճ», 1901:

բառների մասին հաւաքելի նիւթերը լայն ասպարէզ բաց կաննն հետաքրքրելի վերահայրական համեմատութիւններին, կնպաստեն մեր կլասիքական լեզուի պատմական ուսումնասիրութեան, կպարզեն մեզ բարբառների մէջ գուցէ տակաւին թաղնուած հայ ազգի ցեղական յատկանիշները, կլուսաւորեն աշխարհիկ լեզուի ծագումը, զարգացման աստիճանները և այլն»³⁹⁾:

Ինչու:

Որովհետեւ Մ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻ ասածի պէս՝ «...Լեզուին մեծագոյն հեղինակն է ապրող ժողովուրդը... որ անգիտակցաբար կշարունակէ խօսիլ իրեն հաճելի և բնական եղած կերպով և կստիպէ գրագէտը խօնարհիլ իր առջև»⁴⁰⁾:

ԷԲՆԷՍՏ ՌԸՆԱՆ. «Մեր թէ՛ հին և թէ՛ նոր լրագրողներն ու Ֆիլոսոֆները չգիտէին կամ մոռանում էին այն գիտնական ճշմարտութիւնը, թէ մի լեզուի բուն, իսկական ստեղծողն ու զարգացնողը ժողովուրդն է, ազգն է. իսկ բանասէրները, քերականները նորա մշակներն են: Սուքա՛ ժողովրդական հարուստ ու բազմակողմանի բարբառներից ծաղկաքաղ անելով, պիտի կազմեն, յօրինեն գրական լեզուն և ոչ երբէք արհեստական կերպով իրանցից հնարեն, շարադրեն, որովհետեւ լեզուն և ոչ մի տեսակ արհեստական փոփոխական զարգացումը (évolution), թէ-

³⁹⁾ «Ծրագիր հայ ազգագրութեան», 1887, էր. 2.:

⁴⁰⁾ «Բնական պատմութիւն ԺԹ. դարու հայ դպրութեան» Փարիզ, 1901, էր. 46:

կուզ, հանձարաւոր անհատի ձեռքով կատարած, չէ ընդունում: Ընդհակառակը, լեզուն ժողովրդի բերանում ապրելով, հասարակութեան կեանքի հետ զարգանալով, ինքն իրան, յանկարծ, ինքնակամ կերպով (spontané) բղխում, արտադրում է իր փոփոխութիւնները, իր ձևերը և այլն (Թարգմանութիւն Յարոյի)»⁴¹⁾:

Գ. ՕՏԵԱՆ. «Լեզուն ժողովուրդին բերնին մէջ կշինուի... Բնականի դէմ յանձնապաստանութիւն է ելնել ինքն իրեն օրէնք մը շինել լեզուին ու կարծել, թէ ազգ մ'ամբողջ այն օրէնքով պիտի վարուի»⁴²⁾:

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ. «Լեզուն մի որ և իցէ վարդապետութիւն չէ՛, ամենավատթար վարդապետութիւնը կարելի է տարածել. և նա, նայելով իւր յատկութեան, կձարէ այստեղ ու այնտեղ իրեն հիւանդներ, շատ կամ քիչ Բայց լեզուն վարդապետութիւն չէ՛, կարելի չէ լեզուն քարոզել. ուզես՝ առ բոլոր ազգը, և նստեցնուր աշակերտական նստարանի վերայ, որ անկարելի բան է, դարձեալ աշխատանքդ անօգուտ կլինի: Այս մի շատ քնքոյշ խնդիր է: Լեզուն խորհրդածութիւն չէ՛, որ հրամայուի: Մի որ և իցէ մտքի յայտարար ամենագեղեցիկ ձևը անգամ որ և է գաւառի, պէտք է մտցնենք լեզուի մէջ ոչ թէ ստի-

⁴¹⁾ «Հայոց մամուլը Ռուսաստանում և Կովկասի մէջ», 1878, էր. 62:

⁴²⁾ «Դասագիրք փիլիսոփայութեան» Ն. Ռուսինեանի:

պողական կամ պաշտօնական կերպով, այլ գաղտագողի, որպէս մաքսանենգութիւն, որպէս զի պատճառ չլինի յետաշրջութեան»⁴³⁾:

Կատարում է արդեօք դպրոցը իր սուրբ պարտքը լեզուի մշակման գործում, կամ ի՞նչ չափով է կատարում,—ինչ յայտնի չէ: Բայց ինչ լաւ է յայտնի, որ մեր պետական միջնակարգ դպրոցներում հայ աշակերտների ու աշակերտուհիների մի ահագին բազմութիւն կայ, որոնց մայրենի լեզուի ուսուցիչները, բացարձակ կարելի է ասել, իրանց անփոյթ ու յաճախ բացասական վերաբերումով միմիայն նպաստում են, որ այդ նոր սերունդը օր առօր մոռանայ իր լեզուն: Եւ ո՞չ միայն այդքան: Կան և այդ դպրոցներում ուսանողներ, որոնք նոյն իսկ փախչում են իրանց լեզուի դասերից, յաճախ մինչ անգամ անպատուաբեր համարելով այդ լեզուի ուսումը: Ահա թէ անպարտաճանաչ ու միմիայն մամոնայի՛ ծառայող ուսուցիչը ո՞ր կարող է հասցնել գործը: Այն ինչ՝ դպրոցի դերը այս հարցում ու այսօր—հէտէ շատ կենսական, փափուկ ու պատասխանատու է, քան ե՛րբ և է: Իւրաքանչիւր դպրոցական օր, իւրաքանչիւր դաս հիճա աւելի՛ թանգ պէտք է գնահատվի, քան երբ և է:

Մի կէտ էլ կայ, որի զանց անելը երբէք ներելի չէ: Դա հայ յեռնաբանների լեզուի հարցն է: Զօւր

⁴³⁾ «Ղազար Փարպեցու գրած Թողիք», 1863:

կաշխատեն լեզուի ուսուցիչն ու ձեռնարկը, եթէ միւս առարկաների ձեռնարկները իրանց անկանոն, անմշակ ու շատ անգամ վայրենի լեզուով շարունակ կքանդեն նրանց շինածը: Որ բոլոր հայ ձեռնարկներն էլ առանց բացառութեան, պէտք է ձգտեն կանոնաւոր ու մաքուր լեզուով խօսել աշակերտների հետ,—դա մի աղաղակող պահանջ է, քանի որ լեզուի զարգացման գործը՝ նրանց գործն էլ է:

IV. ԼԵԶՈՒՆ ՊԱՐՔԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՄԷՋ.

Բայց մենք ունենք մէկ ուրիշ գործօն, ուրիշ հիմնարկութիւն, որ լեզուաշինութեան գործում ոչ միայն յետ չէ մնում դպրոցից, այլ և, համարձակ կարելի է ասել, շատ մասամբ նրանից էլ է առաջ գնացել: Դա պարբերական ճաճօն է, հրատարակային թերթը:

«Ինչպէս Ռուսահայոց՝ նոյնպէս և Տաճկահայոց մէջ — գրում է Կ. Տիւրեան — արդի գրականութիւնը ծնունդ է առած լրագրութեամբ: Լրագրութիւնն է որ կարգացած ու կարգացուցած է մատենագրութեան պրոբլեմները. լրագրութեան մէջ են սկսած մատենագիրներն իրենց առաջին քայլերն առնուլ»⁴⁴):

Զարմանալի յեղափոխութիւն է տեղի ունենում մեր աչքի առաջ թէ՛ արևելեան ու թէ՛ մանաւանդ արևմտեան պարբերական մամուլի մէջ: Մինչդեռ Ս. Նազարեանց տրանջում է՝ որ «Նայաստանի Մեղուի», որպէս և «Մշակի» պատուելի հրատարակողքը երկուքն ևս չգիտեն հայերէն»⁴⁵), մեր այժմեայ թեր-

⁴⁴) «Հանդէս ամսօրեայ», 1892, № 1, Կր. 18:

⁴⁵) «Հանդէս գրակ. և պատմ.», 1888, № 1, Կր. 242:

թերը, չնայելով, որ ճառագէթ օտար լեզու է պարբերական թեան օրակ էն գրանգրօմ և ունեն իրանց առանձին, եթէ կարելի է ասել, անհատական թերութիւնները, ուղղակի ղեկավարի դեր են կատարում մայրենի լեզուի հարցում: Այդ երևոյթը աւելի արեւմտեան մամուլի մէջ է աչքի ընկնում, որ այս կողմից խոր ազդեցութիւն է անում արևելեաններին էլ թերթերի վրայ: Պէտք է աւելացնել, սակայն, որ այդ ազդեցութիւնը ոչ այնքան հանրապէս թիրաքահայերի, ինչքան մասնապէս Մխիթարեան միաբանութիւնների ազդեցութիւնն է իսկապէս:

Յամենայն դէպս, սա սթափովելու, վերածնվելու նշան է: Ամէն կողմից, մէկը միւսից լաւ դարբիններ՝ կոկոմներ ու շտիկոմներ է, որ անում են, նոր-նոր օրէնքներ, նոր-նոր բառեր է, որ կուում, կօփում են լեզուի կամ լեզուային սալի վրայ: Ահա միակ մխիթարականը, միակ յուսատուն մեր լեզուի զարգացման և նոյն իսկ պատմութեան գործում: Եթէ մեր պարբերական թերթերը, մանաւանդ արևմտեանները, իբրև ժողովրդի բերան, իբրև նրա հայեացքներն ու զգայումներն արտայայտող, նրա մտքերին ուղղութիւն տվող ու նրան առաջնորդող գործօններ, անձեռնհաս էլ լինեն, այսու ամենայնիւ լեզուաշինութեան գործում նրանց, շեշտելով եմ ասում, մանաւանդ արևմտեանների, ցոյց տված տաք մասնակցութիւնն ու հրատապ գործունէութիւնը վեր է ամէն ծառայութիւնից, որ նրանք երբ և է կարող են անել կամ արած լինել հայ ժողովրդին:

Կշռելով հանգամանքները, ես, ինչքան նկատում եմ, համարձակ կարող եմ ասել, մեր լեզուի այժմեայ դարբնոցները մեր պարբերական թերթերի խմբագրատներն են: Օրինակելի՜ է նրանց ուղղութիւնը, թէ սխալ — դրա մասին չէ՛, ի հարկէ, խօսքս: Մի բան միայն լոյսի պէս պարզ է, որ վերջին տարիներս մեր լեզուն ամէն մասամբ մշակվում, կարգի է ընկնում մեր թերթերի խմբագրատներում: Այնտեղ, այն լեզուային դարբնոցում, ամէն տեղից մտած և ամէն ուղղութիւն ու ուղղագրութիւն ընդունած և մինչ անգամ ուղղութեան մասին չմտածած հայերէնը դրվում է սալի վրայ և թէ՛ լայնքի ու թէ՛ երկայնքի վրայ, ճեծվում, աւելորդ տեղերը կտրտվում ու շտկվում, ստանում է Ֆիրմայի ետքը՝ ու աշխարհ մտնում: Այնտեղ չեն հարցնում, թէ ո՞վ ինչ «համբարի» մարդ է: Ամէնքի ապրանքն էլ մէկ չափսով է դուրս գալիս: Թէ՛ որ թերթի դարբնոցն է ձիշտ չափ ու ձև անում, որը անձիշտ, — այդ ուրիշ հարց է: Բաւական է, որ իւրաքանչիւրը իր որոշ արշինն ունի:

Պէտք է աւելացնել, սակայն, որ թէպէտ մեր պարբերական գրականութիւնը բաղկացած է զլխաւորապէս օրաթերթերից ու ամսաթերթերից, բայց և պէտք է գիտնալ, որ ամսաթերթի դերը լեզուի հարցում բոլորովին ուրիշ է: Դա աւելի՛ աջող պայմանների մէջ է դրված, քան օրաթերթը: Մինչդեռ վերջինը

ամէն օր հրատարակվելու ստիպողականութեամբ է պաշարված, հետեւապէս՝ այնքան էլ հնար ու միջոց չունի կարևոր եղածի չափ ուշք դարձնելու դուրս տրվող համարների լեզուի վրայ, դրա հակառակ, ամսաթերթը ազատ է այդպիսի կաշկանդումներից: Ամսաթերթի խմբագրութիւնը, աւելի՛, քան օրաթերթինը, պարտաւոր է մի լեզուային հանձնը յայտարարի բերել իր համարի բոլոր նիւթերը: Փամանակը, որ աննկատելի է սահում օրաթերթ խմբագրողների ձեռքից, լիով դրված է ամսաթերթ խմբագրողների տրամադրութեան տակ: Միւս կողմից՝ օրաթերթը, այսպէս ասել, մի թռուցիկ թերթ է, որ անցնում, դնում է՝ առանց հետք թողնելու. իսկ ամսաթերթը մնայուն գրուածք է՝ դարանների մէջ իր որոշ տեղն ունենալու իրաւունքով: Այդպիսի մի ամսաթերթ էր և՛ «Հիւսիսափայլը», որի լեզուի մասին նրա գլխաւոր աշխատակից ՆԱԼԲԱՆԴԵԱՆ ասում է «Զկայ մէկ տող, չկայ մէկ խօսք, որ Հիւսիսափայլի գրիչը գրած լինէին առանց չափելու և կշռելու»⁴⁶):

⁴⁶) «Հանդէս գրակ. և պատմ.», 1889, № 2, էր. 268:

V. ԼԵԶՈՒՆ ՈՉ-ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՄԷՉ.

1) ԻՆՔՆՈՒՐՈՅՆ ԳՐՈՒԱԾՔՆԵՐ.

Գանք Հիմա ոչ-պարբերական մամուլին, — Գրքերն:
Օճ, գրքեր, գրքեր: Ի՞նչքան բան է ասվել ձեր
մասին, և դեռ ի՞նչքան էլ մնում է ասելու:

Եթէ ամէն պատահական գրող, լեզուի տարրական
օրէնքներին անտեղեակ ամէն սկսնակ, գիրք չհեղինա-
կէր, չթարգմանէր, այն ժամանակ զուցէ կարելի լի-
նէր տանել մեզնում հրատարակվող գրքերի լեզուի
աւել կամ պակաս անհարթութիւնները, անկանո-
նութիւնները: Բայց արի տե՛ս, որ այժմեայ քննա-
դատութիւնների մեծ մասը ստիպված է այնքան
գրուածքի նիւթի՝ վրայ, որ գլխաւորն է, չճանրա-
նալ, ինչքան նրա լեզուի: Եւ, որ աւելի անտանելի
է, շատ անգամ քննադատը այնպիսի խակ ու ան-
մշակ լեզուների է հանդիպում, որ հարկադրված է—
գրողի մեղքերը քաւելու մտքով—նրա բազմաթիւ,
պէսպէս ու անորակի զեղծութիւններն ու սխալները
զատելու և զտելու համար, կարգի բերել անկարգու-
թիւնները, տեսակների բաժանել ու այնպէս ներ-
կայացնել: Ո՛ւր էր թէ հեղինակներն ու թարգմա-

նողները գնահատէին քննադատի ծառայութիւնները:
Երբէք: Նրանցից ծոյլերը, այնպէս էլ մնում են...
անտարբեր. տգէտները զայրանում են, գիտունները՝
կաշիններից դուրս գալիս. իսկ ամէնքը միասին, նկա-
տութիւններն ընդունելու կամ հերքելու փոխանակ,
«շիտակէ շիտակ» հայհոյում են, — կարճ ձանապարհ:
Չկայ մէկը, որ այնքան բարոյական քաջութիւն ու-
նենայ, որ, ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ ասածի պէս՝ «գոնէ մի
ծե՛ղե չափ շնորհակալ լինի», մինչդեռ հէնց նրանք
են աւելի կատաղում, ովքեր իսկապէս օգտվում են
քննադատի նկատութիւններից:

Ահա, թէ ի՞նչ է ասում այդպիսիների աւիթով
հռչակաւոր ռուս քննադատ ԲԷԼԻՆՍԿԻՅ. «Մեզ-
նում, մինչև օրս էլ, գրականութեան մէջ մի ինչ-որ
խղճուկ, մանկական սրբազան երկիւղածութիւն է
թագաւորում հեղինակների վերաբերմամբ: Գրակա-
նութեան մէջ մենք մեծ-մեծ պատիւներ ենք տալիս
աստիճանների բարձրութեանը և վախենում ենք
ձայն բարձրացնել բարձր անձնաւորութիւնների հաս-
ցէին: Նշանաւոր գրողի մասին խօսելիս մենք սովո-
րաբար սահմանափակվում ենք դատարկ դրուատում-
ներով ու փրօն գովասանքներով: Նրա մասին խիստ
ձշմարտութիւն ասելը մեզնում սրբապղծութիւն է
համարվում»⁴⁷⁾:

Ինչ այդ, ի՞նչքան էլ լինի, հասկանալի է, երբ
խօսքը նշանաւոր գրողի է վերաբերում ու վերաւո-

⁴⁷⁾ «Сочинения Бѣлинскаго»:

րում: Բայց ահա, դուք զիմում էք մի նշանաւոր մարդու. «Պարոն, —ասում էք—ընդունում եմ, որ դուք նշանաւոր բժիշկ էք, իրաւաբան կամ մանկավարժ: Բայց խոստովանեցէք, որ նշանաւոր զրոյ, նշանաւոր հայագէտ չէք: Իուք լեզուային այնպիսի զեղծումների մէջ էք բռնվել, որոնց պատճառով մէկ ուրիշը... կկարմրէր...»: Է՛հ, էլ ի՛նչ նկատումների համար, ասես, որ չին զայրանում նրանք...

Քննադատութիւնը, սակայն, պէտք է անպայման անկողմապահ լինի, եթէ ընդունում ենք, որ գրական ասպարէզը անպայման սուրբ ասպարզ է: Քննադատի համար («իմ ու քո»), բարեկամ ու չարակամ չպէտք է լինի: Քննադատութիւնը գրական դատաստան է. իսկ ամէն դատ ու դատաստան պէտք է արդար լինի: Քննադատի համար չպէտք է լինեն նշանաւոր ու աննշան գրագէտներ, երևելի ու աներևոյթ գրողներ: Երբ գրուածքը զրկւած է հրապարակի վրայ, դատվելու է գրուածքը, և ոչ գրողը: Գրողը, ինչպէս և քննադատի, անձնաւորութիւնը անձեռնմխելի պէտք է մնայ: Ոչինչ արգարացնող հանգամանքներ չպէտք է ընդունվեն գրողի կողմից, երբ արդէն գրուածքը ամէնքի առջևն է:

«Ոմանք կգտեն հեղինակներուն անուններէն, ոչ թէ գործերէն — գրում է մէկ անգլիացի հեղինակ (Թարգմ. Գր. Մալխաս.), — և յետոյ՝ ոչ կզովեն, ոչ կպարտաւեն գրուածները՝ այլ մարդերը: Բոլոր այս

ստրուկ նախիրներուն մէջ յոռին այն մարդն է, որ սէզ անմտութեամբ կմիաւորի ազնուականութեան... Սրբանուէր անուան առջև՝ սխալները կանհետանան և ամէն փառաւորուած տուն՝ (stanza) զաղափարներով կզեղու...»⁴⁸):

Բայց իրօք ի՛նչ ենք տեսնում մեծ մասամբ:

Հեղինակը, փոխադրողը կամ Թարգմանողը, ճշմարտութեան դառը զեղահասները կուլ տալ չկարողանալով, քննադատի օձիքից է բռնում, մինչդեռ այն կողմը զեղծումներն ու սխալները մնում են անջնջելի: Քննադատը, այո, սխալված էլ կարող է լինել. բայց պէտք է ապացուցել նրա սխալված լինելը, ոչ թէ հայհոյել: Հեղինակին, գրողին մնում է միայն իր գրածը պաշտպանել. քննադատի նկատումներն ու շտկումները հերքել: Բայց հերքումներից խոյս տալը՝ պաշտպանվել չէ: «Սոփեստաբար փաստաբանել — գրում է ՋՕՆ ՍՏԻՒՍՐՏ ՄԻԼԼ—բաց թողնել Ֆակտեր կամ արգումէնտներ, անկանոն դասաւորել վէճի տարրերը, կամ եղծել հակառակ կարծիքը, — ահա ամենադատապարտելի գործողութեան եղանակը բանակոււի մէջ»⁴⁹):

Բանակոււի հարցում հրապարակային թերթի դերը շատ փափուկ է ու պատասխանատու: Հաւասարապէս բաց անելով իր էջերը կուող կողմերի առաջ, նա հնար ու միջոց պէտք է տայ ճշմարտութիւնը

⁴⁸) «Հանդէս ամսօրեայ», 1902, № 4, եր. 17:

⁴⁹) «Աղատութեան մասին», Թարգմ. Ա. Կ., 1898, Սօսկվա եր. 121:

հրապարակ հանելուն: «Երբ մարդիկ ստիպուած են լսել երկու կողմին ևս — ասում է Ջ. ՄՏ. ՄԻԼԼ — ապա յոյս կայ, թէ նրանք կը գտնեն ճշմարտութիւնը. բայց երբ նրանք լսում են միմիայն մի կողմին, այն ժամանակ ինքը ճշմարտութիւնը կորցնում է ճշմարտութեան բոլոր յատկութիւնը և չափազանցութիւնների պատճառով դառնում է կեղծիք»⁵⁰): Եւ որովհետեւ հրապարակային թերթն էլ ի՛ր շահերն ունի, այս պատճառով նրա տանն էլ «իմ ուք» կայ: Մե՛ր մարդն էք, — համեցէք, զրեցէք ազատ. ուրի՛շ «համբարի» մարդ էք, — ներողութիւն. մենք հարցը փակում ենք:

Ոչ-պարբերական զրուածք, այսինքը, ինքնուրոյն, փոխադրական կամ թարգմանական երկ երկնողեց, որ աւելի աջող պայմանների մէջ է գտնվում, քան նա, որ ստիպված է ժամանակի որոշ շրջաններում հրատարակել իր աշխատութիւնը, աւելի էլ շատ պահանջներ կարելի է ու պէտք է անել: Նա էլ պարտաւոր է գոհացում տալ այդ պահանջներին, քանի որ այդ պահանջում են թէ՛ զրոյի ու սպառողի և թէ՛ մանաւանդ երկուսի միջև եղած ֆակտորի — լեզուի շահերը: «Թէ ինքնուրոյն և թէ թարգմանական զրուածքում — գրում է Գ. Ի. ԽՍԼԱԹԵԱՆՑ — որքան և սա զրաւիչ և վսեմ բովանդակութիւն

⁵⁰) «Ազատութեան մասին», եր. 118:

ունենար, ամենից առաջ լեզուն է, որ աչքի է զարկում: դարձեալ նոյն լեզուն է, որ նաև չնչին ու դատարկ նկարագիրը հետաքրքրութեամբ կարդալ է տալիս մեզ»⁵¹):

Լեզուի զրաւչութեան ու ոճի վսեմութեան մասին շատերն այն կարծիքի են, թէ ի՛նչքան ոճը մտ լինի զրաբարին, այնքան հարազատ ու վսեմ կլինի Իմ կարծիքով՝ դա սխալ հայեացք է, մանաւանդ թէ դեռ ապացուցված չէ, թէ նոր լեզուն հիմ՞ զաւակն է, թէ նրանից էլ առաջ ու նրանից անկախ գոյութիւն ունեցող մի լեզու: «Մենք մինչև հիմա էլ չգիտենք — գրում է Բ. ՊԱՏԿԱՆԵԱՆ —, թէ այդ բարբառը հայոց ո՞ր ցեղի լեզուն էր և արդեօք նա այն ժամանակ հանրապէս մի կենդանի՞ բարբառ էր»⁵²): Եւ Ս. ՇԱՅԱՍԻՅԱՆ, թէ «Յայտնի բան է, դժուար է հաստատել, թէ զրոյ լեզուն արդեօք եղե՞լ է մի որ գործածական լեզու. աւելի հեշտ է հաստատել, որ զրոյ լեզուն, ինչպէս որ նա կայ, չի եղել իրրէք գործածական»⁵³):

Խօսք չկայ, որ զրաբարին, իբրև արդէն լեով կազմակերպված բարբառի, — որ V—XIX դարերում իր զարգացման գագաթնակէտին էր հասել, — նոր լեզուն հարկաւոր դէպքերում դիմելու պէտքը շատ կրգգայ:

⁵¹) «Մովսէս Խորենացու Հայոց պատմութիւնը», Խ. Ծ. 4. Ստեփանէի, 1890, եր. 26:

⁵²) «Материалы для изучения армянскихъ нарѣчій», выпускъ I, 1875, եր, VIII:

⁵³) «Ամառնային նամակներ», եր. 192:

«Նոր լեզուն—գրում է ՆԱԼԲԱՆԴԵՍՆ—, գոյանալով այլ պատմական դեպքերի, այլ աշխարհների և այլ ժամանակների ազդեցութեան տակ, շատ բառ չունի, որովհետև ժողովուրդը կամ չունի այդ բառերի գաղափարը կամ օտար բառ է գործ ածում: Յայտնի է թէ այդպիսի դիպուածում պիտի բառ փոխ առնենք հին լեզուից»⁵⁴): Դ. Ա. Ա. ՅԵՍՆՑ. — «Մենք գրաբառից կը խմենք, ինչ որ կխմի, կուտենք, ինչ որ կարելի է ուտել և մարսել, բայց ոչ կուտենք և ոչ կը խմենք՝ անմարս բաները: Եւրոպական գրականութիւնը մեր ներկայ լեզուի վրայ այժմ աւելի ազդեցութիւն ունի, քան թէ մեր հին լեզուն: Փախչել այդ ազդեցութիւնից թէ՛ անհնարին է և թէ յիմարութիւն: Եւրոպան իր լուսաւորութեամբը հիղեղում է մեր կեանքը նորանոր նիւթերով և գաղափարներով, որ ասել է՝ նորանոր բառերով և դարձեալներով, որոնք անձանօթ էին հնումը»⁵⁵): Բայց «Աշխարհաբարի ուսումնասիրութիւնը, իր գաւառական բարբառների հետ միասին, —աւելացնում է Ս. ՇԱՆՏԱԶԻՉԵՍՆ—անկատար կլինէր, եթէ մենք միանգամայն բարձի թողի անէինք և զրոյց լեզուի զարգացման ֆազիսները: Դրաբարը և աշխարհաբարը թէպէտև էպպէս զանազանում են միմեանցից, բայց երկուսն էլ մի աղբիւրից են, համասեռ են և փոխադարձաբար լոյս են տալիս իւրեանց կազմակեր-

⁵⁴) «Հանդէս գրակ. և պատմ.», 1890, սր. 348:

⁵⁵) «Տարազ», 1890, սր. 83:

պութեան... Սովորել աշխարհաբարը միայն պրակտիկական փորձերից, առանց դորա պատմութիւնը ուսումնասիրելու, ասել է և խախուտ հիմք դնել դորան և մտաւոր կարգապահութիւն չհաղորդել ուսանողին»⁵⁶):

Սյուսու ամենայնիւ լեզուն, «ճշ կամ աշխարհաբար պէտք է լինի կամ գրաբար: Միջին ճանապարհներ փնտռելու կարիք չկայ: Մենք գրաբարին վաղուց ենք ասել մեր «հրաժարիմքը»: Արհեստական լեզու և ո՞չ ստեղծելու ջանքերը ոչ միայն առաջ չեն տանի մեզ, այլ և շատ յետ կտանեն: Եւ դեռ կան մարդիկ, որոնք, իբրև լեզուի ուղղափառներ, աշխարհաբարի զարգացումը՝ գրաբարի՝ նրա վրայ ունեցած ազդեցութեան զօրանալու մէջ են փնտռում: Բայց «ժողովուրդի վզին փաթաթել մի արհեստական խորթ լեզու—գրում է Լ. — մեր մէջ, դարերի ընթացքում, նշանակել է՝ սպանել լեզուն, հարկադրել որ ժողովուրդը ոչինչ չգտնէ իր լեզուի մէջ և երեսի վրայ գցէ նրան, օտարների մօտ որոնէ հարուստ, ճկուն լեզու: Դրականութիւնը այդպիսով սպանված էր, մեռած, անկենդան. և մեզ մնաց մի անմշակ, աղքատ ու խեղճ լեզու... և այս քայլը մենք անում ենք Արովեանից ու Բաֆֆից յետոյ, որոնք չափանց պարզ կերպով ցոյց տուին, թէ ո՞ր լեզուն է ժողովուրդին յուզում, լացացնում, զգալ տալիս, վառում, տաքացնում»⁵⁷): «Վաղուց արդէն—ասում է

⁵⁶) «Ամառնային նամակներ», սր. 192:

⁵⁷) «Մուրձ», 1901, № 7, սր. 165:

Մ. ԱՔԵՂԵՍՆ—մեր նորածին աշխարհաբարի մէջ եղած գրաբարի ձևերը, որոնք անխուսափելի են ամէն մի նոր ծնունդ գրականական լեզուի համար, դուրս են ձգուում և հետզհետէ մեր արեւելիան կոչուած աշխարհաբարը շատ արագ թոթափում է իւր վրայից գրաբարի այդ ազդեցութիւնը»⁵⁸):

Երկնողի, գրողի նպատակն է մի ծառայութիւն անել կարգացող ժողովրդին. իսկ այդ ծառայութիւնը անվերջ է տոհմային, գրական լեզուով: Եւ ինչքան այդ լեզուն նրա գրքի երեսներում գրաւելութիւն ու թովշութիւն կունենայ, այնքան էլ իրագործված կլինի դրված նպատակը: Իսկ գրաւել լինելու համար ամէն գրքի լեզուից պահանջվում է 1) արտայայտութեան կողմից — հայայեթն-նի-ն, 2) կազմութեան կողմից — ճշտ-նի-ն և 3) հնչումի կողմից — երաժշտական-նի-ն:

Սիրով ու մի առանձին ախորժանքով է կարգացվում այն դիրքը, որ այդ բոլոր պահանջները լրացնելու յատկութիւնն ունի, այս պատճառով էլ հազադիւրս են մեզնում այնպիսի երկեր, որոնք տպված լինեն այդ յատկութիւններով օժտված լեզուով: Մեր այժմեայ գրքերի մեծ մասը այնպիսի աղքատիկ լեզուով են խօսում, որ երաժշտականութիւնը առժամանակ շուայլութիւն կարող է համար-

⁵⁸) «Նոր-Դար», 1890, № 141:

վել: Ենթահակալ պէտք է լինենք, եթէ գրողը հետներս խօսում է հարազատ, կանոնաւոր ու մաքուր լեզուով:

Ասելով, թէ լեզուն արտայայտութեան կողմից պէտք է լինի հայեթն, նշանակում է այս կամ այն օտար լեզուի դրոշմը չպէտք է կրի իր վրայ, ազատ պէտք է լինի օտարի արտայայտութեան սեփական եղանակից, որպէս զի կարգացողն զգայ, թէ իր հետ իր մայրենի լեզուով են խօսում:

Ասելով լեզուն կազմութեան կողմից ճշտ-նի-ն պէտք է ունենայ, յանկալի է համարվում, որ նա ժողովրդի լեզուի անկանոնութիւնները չունենայ: Չէ որ ամէնամաքուր խօսողն անգամ խօսելու միջոցին ընդունված օրէնքից խոտորումներ է թոյլ տալիս. իսկ ժողովուրդը այդ անում է ամէն անգամ ու ամէն րոպէ: Անշուշտ, ինչ որ ներելի է խօսողին—որ ուզի-չուզի, արդէն խօսքը թուցրել է բերնից—այն ներելի չէ գրողին, որ գրելու համար անտեսած ժամանակը իր տրամադրութեան տակ ունի:

Վերջապէս, հնչումի կողմից լեզուն այն ժամանակն է ունենում երաժշտական-նի-ն, երբ կարգացողը առաջ է գնում, ասես թէ սահելով, և երբ պարբերութիւնների, մտքերի իւրաքանչիւր մասը այնպէս է կապված նախորդի ու յետնորդի հետ, կէտերն ու շեշտերը այնպէս չափած, ձևած են դրված իրանց տեղերը, որ կարգալը աւելի մի ներդաշնակ մուզիկէ է նման, քան սովորական խօսք ու զրոյցի:

Կայ և մի բան, որ ամէն գրողից անհրաժեշտա-

պէս պահանջելի է: Դա՛ որոշ սկզբունքներով, որոշ օրէնքներով ղեկավարվելն է: Նշանաւոր է, թէ աննշան գրուածքը, ուղեղ է, թէ սխալ շարուածքը, — ամէն գրող պէտք է ունենայ իր համար մշակած մի որոշ կանոն, մի սեփական ուղղութիւն: «Որ և իցէ հեղինակ — ասում է ՆԱԼԲԱՆԴԵԱՆ — մի բան զրեւոժամանակ, պէտք է նայի, որ իր ձև ու ոճը հարթութիւն ունենայ և մի կանոնով առաջնորդվի. իսկ առանց կանոնի, առանց համակարգութեան՝ երբեմն արեւելք նայելով և երբեմն արեւմուտք, լեզուն դառնում է մի մաճնաբրթոշ, էլ դժուար է այնուհետև հաւատարմ թէ այդ լեզուով գիրք կամ օրագիր հրատարակելը կարող է ժողովրդի խօսած լեզուն մարդիկ մշակել, կամ նորա վերայ ազդեցութիւն ունենալ: Եւ ի՛նչպէս կարնայ ժողովուրդը իր կարգացած գրքից մի ձև առնուլ մի որոշեալ բառի վերաբերութեամբ, երբ այդ բառը տարբեր ձևերով է գործածվում այնտեղ, որը նոցանից ընդունէ, որպէս հետեւելի օրինակ»⁵⁹⁾:

Ստոր է ամէն կրիտիկայից այն գրուածքը, որի իւրաքանչիւր երեսում գրողն անհոգութեան ու «անգրլիութեան» ապացոյցներին ենք շարունակ հանդիպում: Կարծես, պակաս դժուարութիւններ է ստեղծում այն հանգամանքը, որ այսօր ինչքան գրող, այնքան էլ ուղղութիւն ունենք, — դեռ ստիպված ենք կարգաւ այնպիսի գրուածքներ, որոնց հեղինակ-

⁵⁹⁾ «Հանդէս գրակ. և պատմ.», 1890, № 3. Կր. 343:

ները ուղղութիւն անգամ չունեն: Արժէ՛, որ խիստ քննադատութիւնը միանգամայն փակի դրանցպէսների առաջ գրելու ասպարէզը: «Խնայել միջակութիւնը — ասում է ԲԷԼԻՆՍԿԻՅ —, անշտորհքութիւնը, ագիտութիւնը կամ գրական չարհութիւնը, նշանակում է՝ նպաստել նրանց զօրանալուն: Շատերն էլ ասում են՝ ինչո՞ւ դուք հայհոյում էք, և ո՞չ ապացուցում... Բայց, պարոններ, միթէ կարելի՞ է կշիռների մօտ դատել զոյների մասին, խլիբի մօտ՝ մուղիքի: Ապացոյցներով կարելի է քննադատել այն գիրքը, որի մէջ, թերութիւնների հետ, արժանաւորութիւններ էլ կան»⁶⁰⁾:

2) ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ.

Սյդ կարգի գրողներին պատկանում է զխաւորապէս թարգմանողների դասը: Եւ դրանց թիւը շատ մեծ է:

Բայց առաջ երկու խօսք:

Ձգիտեմ, ինչի՛ վրայ հիմնվելով, ՄԻՅՐԱՆ ՅՈՎՅԱՆՆԷՍԵԱՆ մէկ այսպիսի միտք է արծարծում. «Սյո՛, մէկ տող հեղինակութիւն աւելի կարժէ, քան հազար հատուր օտարէ փոխառութիւն»⁶¹⁾, — այսինքը՝ թարգմանութիւն, — մի միտք, որ իրաւունքով դա-

⁶⁰⁾ «Сочиненія Бѣлинскаго».

⁶¹⁾ «Քննական պատմութիւն ժԹ. դարու դպրութեան», Կր. 287:

տապարտում է նրա քննադատ ՍՏ. ՄՍ.ԼԻՍՍԵՍԵՆ⁶²⁾:
 Եւ Տ. Յ. աւելայնում է. «Մեղնում, որոշ շրջան-
 ներում, մի փոքր բարձրից են վերաբերվում թարգ-
 մանական գրականութեան, չհասկանալով որ մի կլա-
 սիքական գրուածքի շնորհքով թարգմանութիւն
 ո՛չ միայն ինքն ըստ ինքեան հազարապատիկ մեծ
 արժէք ունի, քան մի ինքնուրոյն, թէ և շնորհալի,
 բայց միջակ գրուածք, այլ և այն օգուան ունի, որ
 կարող է առաջ բերել հարիւրաւոր այդպիսի գը-
 րուածքներ»⁶³⁾: «Ճարտար և ճշգրիտ թարգմանու-
 թիւնն, ըսին բազում հետամուտք, է միւս ինքնա-
 գիր հեղինակութիւն, որով կվայելչանայ ո՞՞ գրու-
 թեան, կյստակի ճաշակն, նաև կբարգաւաճին ազգի
 ազգի գիտութիւնք և կծաղկին գեղարուեստք: Եւ
 յիրաւի մեր ազգին մատենագրութեան մէջ ո՞ր դարն
 արժանացաւ կոչել Ոսկեդար, եթէ ոչ հինգերորդ
 դարն, որ և կկոչուի ևս՝ թարգմանչաց դար...»⁶⁴⁾:
 «Գնէգիչն՝ հոմերի Եղիականը — գրում է ԲԷԼԻՆ.
 ՍԿԻՅ — մէկ այնպիսի ծառայութիւն է, որի համար
 չկայ ոչինչ արժանաւոր վարձատրութիւն»⁶⁵⁾:

Իառնանք թարգմանողներին:

Հայ գրականութեամբ կարգին չպարապած, ընտիր
 հեղինակութիւնների չծանօթացած, յաճախ նոյն
 իսկ հայի պէս հայախօս չեղած, յենված միմիայն

62) «Մուրճ», 1901, № 10, էր. 188:

63) Ibid., № 1, էր. 198:

64) «Բազմավէպ», 1889, էր. 170:

65) «Сочинения Бѣлинскаго», ч. VIII, էր. 287:

որ և է օտար—սովորաբար ուսու—լեզուի մէջ ձեռք
 բերած լեզուային վայր ի վերոյ և աղքատիկ տեղե-
 կութիւնների վրայ, այդպիսիները, առանց աջ ու
 ձախ նայելու, ձեռք են տալիս հաւանած գրքի թարգ-
 մանութեանը: Ունե՞ն արդեօք պահանջվող պատ-
 րաստութիւնը, ձեռնհաս են նոյն իսկ օտարը ըմբռնե-
 լու, ծանօթ են նրա օգուան,—գրանց մասին մտածել
 անգամ չէ հարկաւորվում: Բայց մեր նոր լեզուն
 ջարդվում, ծալվում, այլանդակվում է ո՛չ այնքան
 ինքնուրոյն, ինչքան թարգմանական երկերի մէջ:

«Մեր այժմեան մատենագրութեան մէջ—գրում է
 ՆՍ.ՋՍ.ՐԵՍՆՅ — տեսանում ենք մի բան, այսինքն՝ որ
 մեր գրողքը, լինելով տգէտ հայախօսութեան հոգուն
 կամ, նոյն է, իւրեանց մէջ չկրթելով մի յատուկ
 հայկական լեզուի գաղափար, մի կարգաւոր հայա-
 խօսութեան իդէա, մտածում են ուսուերէն և ուսուե-
 րէն մտածութիւնքը զգեստաւորում են լոկ հայկա-
 կան, շատ անգամ այլանդակապէս ձևաւորուած
 բառերով, մինչև այն աստիճան, որ դոցա գրուածքը
 կարելի էր միայն հասկանալ, յեղափոխելով դար-
 ձեալ դէպ այն մտածութեան ձևերը, ուստի նրքա
 թարգմանօրէն աղբիւրացած էին»⁶⁶⁾: Ռուս կենսա-
 կրթութեան սանն — ասում է Գ. ԽՍՏԻՍԵՍՆ —
 արդէն ուսուերէն մտածում ու թարգմանում է հա-
 յերէն»⁶⁷⁾: Արժրուանու օրերով — գրում է Տ. Մ. —

66) «Հանդէս գրակ. և պատմ.», 1888, № 1, էր. 244:

67) «Վտակ», 1901, էր. 308:

նուսական ազդեցութիւնը սկսեց օր ըստ օրէ աւելի զօրեղանալ, որ իւր շարունակութեամբ ներկայումս իւր զագաթնակէտին է հասել... մեր կարծիքով ոչ մի լեզու չէ հնթարկուել մի ուրիշի ազդեցութեանը այնպիսի թուլութեամբ, ինչպէս ռուսական լեզուն մի ժամանակ հնթարկուեցաւ Ֆրանսիականին... Բայց եթէ այժմեան ռուս գրականութիւնից դուրս են մղուած օտարամուտ ոճերի կազմութիւնը, միշտ հաստատուն և հիմնաւոր կերպով մնաց նորա մէջ օտարամուտ բառերի ամբողջութիւնը, մի այնպիսի սերտ և առատ կերպով, որ եթէ փորձէին դուրս ձգել իրանց գրականութիւնից, ռուսաց լեզուն անկարող կլինէր իւր բառերի կազմութեան աղքատութեամբ զուգընթացաբար առաջ գնալ գիտութեան մէջ իւր զրացի եւրոպական ազգերի հետ: Ահա այս դրութեան մէջ էր ռուսաց լեզուն՝ կրք հայոց գրականութիւնը ընկաւ նորա ազդեցութեան տակ»⁶⁸):

Մեր այժմեայ՝ մորեխի պէս շատացող թարգմանողների օրով շատ օգտակար է, որ մի և նոյն գիրքը ունենար մի քանի թարգմանութիւն: Այս միտքը հարկաւորվում է արաբացայտել մինչ անգամ հայերէնից հայերէն փոխադրելու նկատմամբ, ինչպէս «Մովսէս Խորենացու հայոց պատմութիւնն» է՝ Խ. Տ. վ. Մտեփանէի փոխադրութեամբ: Իսկ կունենար այն օգուտը, որ գնողները համեմատաբար լաւ թարգմանութիւնը ձեռք կը բերէին, վատ թարգմանողներն էլ

⁶⁸) «Բազմավէպ», 1898, եր. 177:

կառուցէին՝ գործին անձեռնհաս կամ անփոյթ կերպով վերաբերվելուն համար: Եւ գրանից առաջ կգար մի մրցում, որից կշահվէր նաև գրականութիւնը, հարստանալով պիտանի ու ընտիր թարգմանութիւններով:

Մեզնում սովորաբար մոռանում են, որ թարգմանելն էլ, ինչպէս և խօսելն ու գրելը, ձիրք է, շնորհք է, որ ամէնքին չէ՛ տրված⁶⁹): Չունենալով կարգին թարգմանութիւններ՝ (մի - երկու բացառութիւնը հաշի չե՛մ առնում) ունենք, սակայն, տանելի ու անտանելի թարգմանութիւններ, որոնցով անխնայ ողողված է մեր թարգմանական գրականութիւնը:

Թարգմանական գործի մէջ զլիսաւորը, էականը, ոչ թէ թարգմանելու առանձին տենչ ունենալը պէտք է լինի, որ հաւասարազօր է փառասիրական ձգտման, ոչ էլ գրականութեան այդ ճիւղը կամ տեսակը ամէն պատահական գրուածքով հարստացրելու անօգուտ փափաքը, — այլ քաղաքակրթված ազգերի լուսամիտ գաղափարները մեզնում սերմանելը, մեզ էլ լուսաւոր, անխառն ու լայն հայեացքների մասնակից անելը: Իսկ այդ ձեռք կրելով, միմիայն օտարը լաւ հայացնելով: Բայց, թէպէտ ներկայումս օրինաւոր թարգմանողներ, այսինքը օտար մտքերը, յոյզերն ու կրքերը լաւ հայացնողներ չունենք, — ունենք, սակայն, այն էլ՝ ցանկացածից շատ

⁶⁹) Ինչպէս առաքեալն էլ ասում է. «Ումեմն ի հոգւոյն տուեալ է բան իմաստութեան... այլում ազգը լեզուաց, այլում թարգմանութիւնը լեզուաց... Մի՞թէ ամենքեան կարգմանիցն...»:

աւելի, օտար լեզուի բառերը հայերէնի փոխադրողներ, նոյն իսկ անշնորհք կերպով փոխադրողներ:

Թարգմանողը մի միջնորդ է հեղինակի ու այն լեզուի միջև, որով ուզում է թարգմանել. այս պատճառով նա պէտք է հաւասարապէս կամ համարեա հաւասարապէս տեղեակ լինի երկու լեզուներին էլ: Բայց եթէ, ինչպէս և է, ներելի է, որ նա լեզուներից որ և է մէկին պակաս տեղեակ լինի, քան միւսին, ապա այդ ներելի է աւելի բնագրի՝, քան այն լեզուին, որով թարգմանվում է, մանաւանդ, եթէ այս դէպքում այդ վերջինը իր մայրենի լեզուն է: «Պէտք է միայն—զրում է Գ. ԽԱԼԱԹԵԱՆՑ—քաջ տեղեակ լինել և համութեամբ իշխել այն լեզուին, որով թարգմանում ենք. ահա յաջողութեան բոլոր գաղտնիքը»: ⁷⁰⁾ Իսկ եթէ թարգմանողը իր սեփական լեզուումն է կաղում, եթէ վայր ի վերոյ գիտէ իր լեզուն, եթէ ծանօթ չէ՝ նրա ոգուն, նրա շեշտին, նրա երաժշտական կողմին, այն ժամանակ նա չէ՛ թարգմանում, այլ կարկատում է ու բնագիրն աղաւղում: «Քաջ թարգմանողի կարևորագոյն արժանաւորութիւններից մէկն ևս այն է — ասում է Գ. Խ.—, որ նա իւր թարգմանութեան մէջ կարողանայ արտափայլել տալ ցոլացնել բնագրի «գէն», քնորոշ ոճը, հեղինակին սեպհական՝ միտք արտայայտելու ձևն ու եղանակը, նորա ներքին ու արտաքին՝ մտքի ու լեզուի յատկանիշները, — ինչ լեզուով և

⁷⁰⁾ «Մ. Խոր. Հայոց պատմ.», եր. 15:

թարգմանելու լինէր» ⁷¹⁾: «Ճմուռ թարգմանը—զրում է ԵՐ. ՇԱՀԱՋԻՉ — պէտք է ոչ միայն հասկանայ, սիրէ, զգայ թարգմանելը նիւթը, այլ և պէտք է սեփականէ, իւրացնէ և՛ թարգմանելը բնագրի հեղինակի արտայայտութեան եղանակը: Թարգմանիչը, ի հարկէ, չպէտք փոխէ հեղինակի իմաստը, բայց չի կարելի պահանջել, որ նա չփոխէ և՛ բնագրի ձևը, որովհետև շատ անգամ մի լեզուի ձևերը յատուկ են միայն այդ լեզուին և նոցա փոխադրելու, թարգմանելու համար անհրաժեշտ է փոխելը, յարմարեցրնելը թարգմանելը լեզուի ձևերին. նոյնպէս և պէտք է թարգմանելու ժամանակ հաւատարիմ մնալ բնագրին, բայց ծայրայիղ ճշգրիտ և անվթար հաւատարմութիւնը յաճախ կարող է թարգմանութիւնը նիւթական դարձնել և մթնեցնել հեղինակի իմաստը...» ⁷²⁾: «Բաւական չէ՛ միայն թարգմանել — կրկնում է ՅԱՐՈՅ —, ...այլ և պէտք է, հարկաւոր է հաղորդել ընթերցողին այն անմահ ոգին, այն գեղեցիկ ոճը ու մինչև անգամ ամբօխին հասկանալի, այն խորին զգացմունքը, որ միշտ յատուկ է» ⁷³⁾... նշանաւոր հեղինակների շարադրութիւններին: «Լաւ թարգմանիչ մը՝ զրում Մ. Յ. ՀԻՍՍԱՐԵԱՆ — հեղինակին ճիշտ գաղափարը տալու համար, ոչ անոր մտքերէն և զրութեան ձևերէն կհեռանայ, ոչ կու-

⁷¹⁾ «Լուծայ» 1903, № 4:

⁷²⁾ Ibid, նոյն տրես:

⁷³⁾ «Հայոց մամուլը Ռուսաստանում և Գովկասի մէջ», 1878, եր. 125:

րորէն հետզհետէ առէն առոր բառերը դարձնելով կշարէ»⁷⁴): Ուրիշ խօսքով՝ ոչ բառացի՝ պէտք է թարգմանի, ոչ էլ ըստ քմաց: Նա կարող է, օրինակ, բնագրի՝ երկու խօսքով արտայայտած միտքը մէկ ընդարձակ նախադասութիւնով արտայայտել. երբեմն էլ, դրա հակառակ, շատ բառերով արտայայտված իմաստը քիչ բառերով ամփոփել, ինչպէս ասում է ԳԱՅՐԻԻԷԼ ՀՍՄԱԶՍՍՊԵՍՆ. «Ոչ պարաւանդիմք մեք թարգմանիչքս տալ ի չափու զխօսս. այլ բաւական է նկատել և կշռել հաւասարապէս զծանրութիւն բանից»⁷⁵): Իսկ Ս. Մ. աւելցնում է. «Երբ որ ուսն ասում է. ЧТО-ЖЕ, БѢЛЫЯ ЛЕБЕДУШКИ, ПРИТИХЛИ,—նորա երեւակայութեան առջև իսկոյն պատկերանում է ազգային, ցեղական գեղեցկութիւնը, славянская красота, իւր բոլոր շքեղութիւններով. իսկ երբ որ հայերէն էք ասում. «Ինչո՞ւ էք դուք մունջ, «պխտակ կարապետեր», այս բառերը մեր ականջում հնչում են ցուրտ կերպով, լսողն սրտի լարերը չեն հնչեցնում, և նոյնքան նշանակութիւն են ունենում, եթէ փոխարէնը գրված լինէր «պխտակ ջայլամներ, կամ նաև «պխտակ ողններ, «պխտակ կենդանիներ, «պխտակ իրապետներ. բայց փորձեցէ՛ք ասել «պխտակ աղո՞ւսակներ, «երո՞ւն ճարակներ, Բաժնա՞կի +ուլաններ, և մեր Կրպօ-Մկօ-ներին աչքերը կը փայլեն, որովհետև նոցա զիտակցութեան

⁷⁴) «Բանասէր», 1851, եր. 452:

⁷⁵) «Գիրք ոսկեղէն», 1738, Վննետիկ:

մէջ կը նկարուին կենդանի պատկերներ: Ուրեմն կան բառեր, որոնք ականջի շեմքումն են մտում, և կան բառեր, որոնք թափանցում են մտքի և սրտի խորքերը: Եւ եթէ բառերը կարգացողն մէջ պատկերացումներ չեն զարթեցնում, այդ նոյն է, թէ նոքա լինէին օտար լեզուի, անձանօթ լեզուի բառեր»⁷⁶): «Թարգմանութիւն ըսածնիս — գրում է Հ. ԵՒ. Վ. ՀԻՒՐՄԻԻԶ—լեզուէ լեզու բան մը անցընեն է. և ինչպէս դեսպանն իր թագաւորին խօսքը ուրիշի որ կտանի, այնչափ բառերուն չի կապուիր՝ որչափ իմաստիցը, ասանկ ալ թարգմանիչն պիտ որ ջանայ՝ թարգմանած խօսքին իմաստը նոյն ուժով քան թէ նոյն բառերով բացատրել: Ուր որ կարելի է բառերն ու ոճերն ալ պահել, լաւագոյն կըլայ թարգմանութիւնը, բայց ամէն տեղ չի յաջողեր այս կերպը»⁷⁷):

Բայց երկու դէպքումն էլ հաւատարմութիւնը այն բանից կերևայ, որ թարգմանողը բաց չի թողնի նոյն իսկ մի բառ, որ հեղինակը կարևոր է համարել՝ իմաստը իր ուզածի չափ պարզ արտայայտելու համար: Գլխաւորն այն է, որ նա ստրկաբար հետեւի հեղինակին: Նոյն միտքն է պարունակվում և՛ հետեւեալի մէջ: «Մենք առաջին պարաւանդութիւնն ենք համարում հարազատ թարգմանիչ լինել, տալ այն ամէնը, ինչ որ ունի թարգմանուող հեղինակը

⁷⁶) «Արարատ», 1902, եր. 553:

⁷⁷) «Բազմավէպ», 1873, եր. 321:

իր ոճի, իր գրելու եղանակի մէջ: Թարգմանութեան ճշտութիւնը, ի հարկէ, կարևոր է. բայց մենք համարեա՞ միշտ այդ ճշտութեան զոհու՞մ ենք հայերէն լեզուն: Ննարում ենք մեզանից բառեր, մտցնում ենք մեր լեզուին բարձր դարձուածներ և յաճախ առաջ ենք բերում այնպիսի բաբելոնեան խառնակութիւն, որից մեր լեզուն փնասուում է անդադար: Թարգմանիչը արգարանում է նրանով, որ պէտք է ձիշտ թարգմանել: Բայց ընթերցող հասարակութիւնը, նոր գրողները սովորում են այդ լեզուին, — և ահա հայերէնի անկում և աղճատում»⁷⁸⁾:

Կաւ հայացնողին, լաւ թարգմանողին՝ շնորհալի լինելու համար, անհրաժեշտ է նոյնպէս, որ նրա լեզուն լինի կոկ, ողորկ ու սահուն, որպէս զի կարգացողը աւելի տարվի, քան թէ գնայ նրա հոսանքի մէջ, քանի որ թարգմանութեան աղը դրա՞ մէջն է իսկապէս: Իսկ եթէ նա շարունակ կանգ պէտք է առնի մէկ այս, մէկ այն արգելքի առաջ, եթէ այն բառը, որի վրայ ծանրանում է նախադասութեան միտքը, իր տեղը չէ՛ դրված, այլ անփոյթ կերպով ընկած է մի կողմ, եթէ մտքի կամ բառի շեշտը իր տեղը չէ՛, — ապա մի այդպիսի գործ ոչ թէ թարգմանութիւն, այլ կատարեալ անբարեխղճութիւն է: Իսկ այն թարգմանողը, որ մանկութիւնից հայախօս չէ՛ եղած, ում ականջին խորթ է՛ն հնչում օտար ոճերն ու դարձուածները, ո՞վ, բուն հայախօսութեան

⁷⁸⁾ «Մուրճ», 1901, № 8, սր. 254:

հակառակ, ականջ ծակող շեղումներ է թոյլ տալիս, ում լեզուն ոչ միայն զուրկ է երաժշտական յատկութիւնից, այլ և մտքի շեշտն անգամ չէ՛ կարողանում պահպանել, ո՞վ նախադասութեան այս կամ այն անդամը խախտում է իր սեփական բնից, որի մէջ դարեր առաջ նրան տեղաւորել է լեզուի ոգին, ում լեզուի մէջ բառերի յօդերը չարաչար տանջանքի են ենթարկված, ո՞վ հայ ականջին անսովոր բարդութիւններ ու ածանցումներ է առաջարկում, մի խօսքով՝ ում լեզուն խորթ է հնչում բուն, արովեանական հայի ականջին, — նա արդէն մի լեզուային հերձուածող է, օտարին հաւատարիմ, հարազատին դաւաճան:

VI. ՄԵՐ ԼԵԶՈՒԱՇԷՆՆԵՐՆ ՈՒ ԼԵԶՈՒ ՏԱՐԱ-
ՄՈՂՆԵՐԸ.

Սակայն, բացի դպրոցից ու մամուլից, լեզուի կանոնաւորմանն ու տարածմանը կարող են նպաստել և՛ երկու ուրիշ հիմնարկութիւն — եկեղեցական ու թատրոնական բեմերը: Երկուսն էլ կրթական ու նուիրական, երկուսն էլ սուրբ բեմեր: Երկուսի առաջ էլ ժողովրդի բազմութիւնը, ինչպէս մի մարդ, կանգնած կամ նստած, ահանջ է դնում կենդանի խօսքին, — մի տեղ քարոզ խօսողի, միւս տեղ դեր ասողի: Գարուիչ թէ դեռասան կամ արուեստագետ, թէև պաշտօնով տարբեր, սակայն, կողմով նոյնն են: Երկուսն էլ բարոյական սկզբունքներ, վսեմ գաղափարներ են քարոզում, երկուսն էլ ունկնդիրների սիրան ու հոգին են կրթում: Երկուսն էլ բեմի վրայ արձանացած, կենդանի խօսք են շնչում կենդանի ժողովրդի ահանջին: Տեսապէս, եթէ դրանք, բացի իրանց դերերից, լաւ կարողանային իշխել և մայրենի լեզուին, եթէ կարողանային վերահասու լինել, թէ մեր ժամանակում իրանք կարող են և

լաւ՝ լեզու տարածողներ լինել, կրկնակի դեր կլինէին կատարած, ժողովրդին միանգամայն և մաքուր գրական լեզուի ճաշակը տալով:

Այնուհետև ունենք և Բանաստեղծներ, որոնք մի և նոյն ժամանակ բառաստեղծներ էլ են: Ինչպէս ամէն ազգում, այնպէս էլ մեր մէջ, բանաստեղծն է, որ լեզու է ստեղծում կամ կերպարանաւորում ՄԻՍՍԻ ՊՍՂՏՕՍՍՐԵՍՆ. «Վիկտոր Հիւկո» — երբ մի անգամ ընդունեց, թէ գրականութիւնը պէտք է լեզուին օգնէր, զայն կազմակերպելու համար, իր բոլոր ուժովն այդ նպատակի կատարումին փարեցաւ... հակառակ որ իրեն դէմ ունեցաւ ժամանակին բոլոր գրական պետերը... Իրաւամբ, յաջողեցաւ զնել լեզուն այն տեսակ շաւիղի մը մէջ, որ անոր երիտասարդութիւնն ու կենդանութիւնն աուաւ, ուրկէ յաղթական կերպով պիտի ընթանային իր յաջորդները»⁷⁹:

Ղ. Ա. ՂԱՅԵՍՆՑ. «Մեզանում հիւսիսափայլն առաջինն սկսեց նոր լեզուի մշակութիւնը, բայց վերջումն սկսեց դէպի յետ երթալ: Շատերը, նոյն իսկ այսօր տարուբերում են նազարեանցի պէս: Չունինք զօրաւոր տաղանդ, որ իր լեզուով հեղեղէր ամբողջ գրականութիւնը և բոլորին էլ մի աւազանով մկրտէր, մէկ լեզու տար, այսինքն մէկ ուղիղ Բանաստեղծ»:

⁷⁹) «Համալսարան», 1902:

հով Կանէր: Մեր փոքր ի շատէ տաղանդաւոր գրողների վրայ ճշուումն են գործում մեր դազէթածի աղաները, և շատ վատ են անում: Վիպասանի և բանաստեղծի լեզուն պէտք է թողնել անփոփոխ. դրանք են ժողովրդի ներկայացուցիչը և լեզու կը տան մեր գրականութեանը, եթէ մտադրութիւն դարձնեն իրանց լեզւի վրայ»⁸⁰): Գ. ԽԱՏԻՍԵԱՆ. «Խոշոր դեր ունի և տաղանդը. իր տարածուած երկերով նա առաջ է քաշում այս կամ այն բարբառը: Տոսկանայի բարբառը, որով Պէտրարկան իր սօնէտներն էր գրում, իտալական, գրական լեզուն դարձաւ»⁸¹):

Գ. ՎԱՆՑԵԱՆ. «...Այդ լեզուն (աշխարհաբարը) Ռ. Պատկանեանը մկրտեց իր տաղանդի կիզել աւելնով, կեանք ու հոգի փչեց նրա մէջ, գլորեց լոյս աշխարհ և հրամայեց, որ երգեն: Եւ երգեցին նրա գործերը Գանգէսի ափերից մինչև Նեղոս և Վօրգա: Ժողովրդի լեզու չէր դա այլ ևս, ռամիկ ու կենդանի, այլ մի փոքրիկ խմբակի (Նաղարեանց, Նալբանդեանց, Աբովեանց) ձեռնասուն: Մեծ բանաստեղծի դրոշմը ճակատին, նա այլ ևս երկիւղ չունէր արհամարհուելու... Եւ զուցէ ոչ դք այնքան չէ նպաստել աշխարհաբարի զարգացման ու տարածմանը... Ինչ պէս այս տաղանդները... Մի քիչ ուշ Գաթիպային մրցակից հանդիսացաւ... Բաթիֆին... Գաթիպայի երգի լեզուն սրա մէջ դառնում է մի հրապուրելի.

⁸⁰) «Տարագ», 1890, տր. 83:

⁸¹) «Վտակ», 1901, տր. 319:

պրօզա, համեմունճ հարաւի բոյրով, արեւելքի ցօղուն գոյներով, տաք և զգայուն սրտի թրթիւրը շուրթին, երազների պատրանք հագած, ապագայի զառանցալի յոյսերով լի, մի տեսակ Եղիշէ... Մի երրորդ տաղանդ, Աղայեանցը... Մեր գրական լեզուի նրբութիւններն և կատարելութիւններն արտայայտելում զուցէ եզակի... իբրև զուտարիւն հայաբան՝ նա անզուգական է Եզնիկ Կողբացու նման...»⁸²):

Իր ստեղծելու քանին՝ պահանջվող ճկունութիւնը, սահունութիւնն ու երաժշտականութիւնը տալու համար, բանաստեղծը բառեր է կոկում և իր որոշ կնիքն է դնում այն լեզուի վրայ, որ արտայայտում է իր մտքի թռիչքը, իր զգացումների կորովը: Նէգ է այն բանաստեղծը, որ բառեր, մտքի արտայայտութեան եղանակներ չէ՛ կարողանում ստեղծել, որովհետև, երբ բանաստեղծին բառեր ու ձևեր ստեղծելու շնորհք է պակասում, նրան պակասում է շատ բան: Բայց մենք ունենք և բանաստեղծներ, որոնց զգացումների ու մտքի արդիւնքը աղքատ է նոյն իսկ բառերի՝ կողմից, որոնց առաջ փակ են լեզուի շտեմարանները: Նայեցէ՛ք երկնային աշուղ մեծ բանաստեղծ Նարեկացուն. նայեցէ՛ք երկրաւոր աշուղ, ճշմարիտ բանաստեղծ Ալիշանին, — և դուք չէ՛ք կարող չզգալ, որ կանգնած էք երկու բանաստեղծական մեծութիւնների, երկու հսկայ լեզուաչէնների առաջ: Պակաս դեր չեն խաղում այդ մասում և այն բա-

⁸²) Ibid, տր. 392, 394, 395:

նաստեղծները, որոնք պատկերացնող ու նկարչական գրիչ ունեն ձեռքներին, ինչպէս Աբովեան, Չերազ, Սրբանձտեան և այլն: Ականաւոր բանաստեղծից, շնորհալի գրողից, բացի երկնային կայծից՝ սպասվում է և՛ գողտրիկ ու հնչուն լեզու: Առանց հարուստ ու համով-հոտով լեզուի՝ բանաստեղծը չէ տալիս լեզուին իր տուրքը:

Վրացի տաղանդաւոր երիտասարդ բանաստեղծ Վ.Ս.Փ.Ս. ՓՇԱ.ՎԷԼԱ, ասում է. «Ի՞նչ է նշանակում լեզու գիտենալ: Ի հարկէ, բաւական չէ, որ մարդս լոկ բառեր գիտնայ, թէկուզ ամբողջ վրացերէն բառարանը. նա պէտք է կարողանայ բառերն այնպէս համաձայնեցնել միմեանց հետ, որ նախագասութիւն կազմուի: Դրա համար հարկաւոր է, որ մենք իմանանք լեզուի սիրտն ու հոգին. իսկ այդ բանի համար գրողին անհրաժեշտ է ունենալ այն արժանաւորութիւնը, որ նրա սիրտն ու երակները վրացերէն զարկեն: Այդպիսի գրողներին մենք պէտք է որոնենք գեղարուեստական արտադրութիւնների հեղինակների մէջ: Ամենաընտիր բանաստեղծին պէտք է անպատճառ ընդունենք և՛ ամենալաւ գիտացողը լեզուի: Ինչո՞ւ համար: Նրա՞ համար, որ ժողովուրդը ամենից առաջ մայրն է այդ լեզուի, իսկ ամենաընտիր երգիչը—նրա հարազատ զաւակը, և ոչ ոք չէ կարող լինել այնչափ մօտիկ իր ծնողին, որչափ նա, որ իւրացրել է իւր մօր արիւնն ու մարմինը»⁸³):

⁸³) «Մուրճ», 1901, № 6, էր. 240:

«Պուշկինի գրուածքներում — ասում է ԳՕԳՕԼ՝ — ասես թէ մի բառարանի մէջ, ամփոփված է մեր լեզուի բոլոր հարստութիւնը, ձկունութիւնն ու ուժը»⁸⁴): «Պուշկին — գրում է ԳՍԼՈՒՍՏ ՏԷՐՄԿՐՏՉԵԱՆ—կռեց կոփեց ուսու նոր գրական լեզուն իւր բանաստեղծութեանց տողերով. Ռ. Պատկանեան այն ազդեցութիւնը չունեցաւ մեր նոր լեզուի վրայ, ինչ որ ունեցաւ Պուշկին ուսականի վրայ»⁸⁵):

Բանաստեղծներից յետոյ ունենք աչք-դէմք ու երգեցիկ Խճէր:

Սրանք թէպէտ լեզու չեն կազմակերպում, բայց մեր ժամանակում լեզու են տարածում: Ման գալով տնէ տուն, պտտելով քաղաքէ քաղաք, դրանք մի տեղ իր լեզուի գանձերն են բաց անում հայի առաջ, միւս տեղ իր լեզուն են յիշեցնում հային, եթէ նա մոռացման վտանգին է ենթարկված կամ արդէն մոռացվել է: Ի՞նչ սիրուն ու շահեկան գործ կլինէին կատարած մեր հարուստ հայերը, եթէ սովորութիւն անէին իրանց խնջոյքներում ու հարսանիքներում երգեցիկ հայ խմբեր հրաւիրելու, իսկ աշուղներին իրանց տան բազում սիրով ընդունելու, իրանց մեծ ու փոքր զաւակներն էլ նրանց շուրջը բոլորելու: Հայ ծնողները ոչ միայն իրանց բազի

⁸⁴) «Сочинения Бѣлинскаго», ч. VI, стр. 62:

⁸⁵) «Արարատ», 1902, Սեպտ.—Հոկտ.:

գուռը չպէտք է փակեն մեր գիւղէ գիւղ և քաղաքէ քաղաք պտտող խեղճ ու անձար, մեծ մասամբ կոյր աշուղների առաջը, այլ իրանք պէտք է ներս հրաւիրեն, իրանց կօպէկները չինայեն այդ՝ հայի երգն ու լեզուն տարածող գիւղացիներին, նրանց պէտք է սիրա տան, գովեն ու խրախուսեն, իրանց երեխաների ուշքը պէտք է դարձնեն նրանց երգածների վրայ, նրանց բուն հայ-ժողովրդական եղանակների վրայ, հասկացնեն նրանց, որ ինչքան էլ եւրոպական երգերն ու եղանակները բարձր ու ճաշակաւոր լինեն, այսու ամենայնիւ հայ աշուղի սաղն ու երգը մե՛րն են, հայինն են, մե՛ր կեանքն է արտայայտվում նրանց մէջ:

Մեր ժամանակում աշուղների միջև այգպիսի մի գեղեցիկ օրինակ տվել է մեզ աշուղ Ջիվանի. իսկ երգեցիկ խմբեր կազմելու գործում՝ երաժշտագէտ Գրիստափոր Կարա-Մուրզա: Երկուսի արած ծառայութիւնն էլ վերին աստիճանի համակրելի ու արդիւնաւոր է: Երկուսն էլ իրանց երաժշտական գործիքների (մէկն ասիական, միւսը եւրոպական) վրայ հայ լեզուն, հայութեան ոգին են թրթռեցրել. հայութեան ու հայ լեզուի քաղցրութեամբ համակել ունկնդիրներին: Մօտերս վախճանված Կարա-Մուրզայի կատարած մեծ դերի նկարագրութիւններով բաւական ողորկեցին մեր թերթերի էջերը: Այո՛, նա գործի՛ մարդ էր, զաղափարի՛ էր ծառայում, այս պատճառով էլ արգելքների առաջ կանգ չէր առնում, անաջողութիւններից չէր վհատվում: Նա իր

արուեստով հայ լեզուի միսիօնէրն էր՝ այդ բառի մաքուր ու անխառը նշանակութեամբ: Բայց, երևի, քչերին է յայտնի, թէ ի՛նչ նշանակութիւն է ունեցել և ունի իր ասպարէզում մեր խնջոյքների՝ Կարա-Մուրզա, alter ժողովրդական՝ Ջիվանի:

Թող խօսի՛ ԳՐԱՍԷՐ:

«...Մինչև Ջիվանու յայտնուիլը, այսինքն մինչև 60-ական թուականների վերջերը, բոլոր աշուղները անխտիր երգում էին տաճկերէն, պարսկերէն կամ վրացերէն լեզուով: Ջիվանին իւր ամբողջութեամբ նուիրուեց հայերէնին. յիտ մղեց թուրքերէնը և փառաւորապէս հայ քնարերգական բանաստեղծութեան, հայ աշուղական երգերի արժէքը նորից բարձրացրեց իւր ընկած դրութիւնից: Ընկած ենք ասում, որովհետև հայ ունկնդիրներն էլ ցանկանում էին թուրքերէն լսել, զոնէ այդպէս էին սովորել նախորդ աշուղներից: Բաւական է, որ քիչ-շատ հասկացող մարդն անգամ ասում էր թէ՛ «հայեվարը թուրքեվարի համը չունի, զուր բան է»: Ջիվանին՝ այս տգէտ կարծիքը, որ արմատացել էր երգասէր հայ ժողովրդի սրտում, հիմնայատակ արեց: Նա վարուեց խելացի, հայերէն երգերը յարմարեցրեց թուրքերէն այն եղանակներին, որ հասարակութիւնը միշտ պահանջում է, անգիր է արել:

Այստեղ պարզուեց, որ ո՛չ թէ համը թուրքերէնի մէջն է, այլ՝ եղանակների. թուրքերէն բառերը, որ շատերը չէին էլ հասկանում, շատ անպէտք, համարձակ ու սիրոյ երգեր են եղել արևելեան տափական

բնաւորութեամբ: «Միւշտաղէտ» ուզողին նա հայերէն էր երգում, «Քեօր-Օղլի» նոյնպէս, «Թօփխանա-Պիվանի» դարձեալ: Ժողովուրդը տեսաւ իւր մայրենի լեզուի քաղցրութիւնը, հարստութիւնը: Ի՛նչ լաւ բան. առաջ միայն եղանակների համար էր սիրում լսել այժմ՝ եղանակի հետ բառերը հասկանում, նոյնանով մխիթարւում:

Շատ տեղերում վաղուց արդէն երգում են աշըղ-Ջիվանու երգերը: Նորա «Բարի, գեղեցիկը», «Այծեամբ», «Ձախորդ օրերը», «Մեր գործերը» մեծ համակրութեամբ կրկնում են այսօր մեր ժամանակում հայ ժողովրդի բերանում: Աշըղ-Ջիվանու ցոյց տուած հռանդր, նորա երգած ու տարածած մտքերը՝ այն օգուտը, այն արդիւնքը ցոյց տուին և կարող են տալ հայ հասարակութեան և ազգային շարժումներին, ինչ որ գրագէտ մարդկանց կամ ընթերցող հասարակութեան համար մի ողջամիտ ու իսկապէս ժողովուրդ առաջնորդող մէկ օրագիր»⁸⁶):

«Մեր աշըղները—ասում է Ղ. Ա. Ա. Յ. Ս. Ս. Յ.—ոչ թէ չեն ուղեցել սիրոյ երգիչ հանդիսանալ հայոց լեզուով, այլ ստիպւած են եղել մեծամեծներին զվարճացնել նրանց լեզուով: Թո՛ղ այդ մեծամեծները լինէին բուն հայեր, բայց դրանք իրանց մեծութիւնը ու՛մից կլինէին ստացած, եթէ ոչ՝ թաթարներից կամ թուրքերից, և ի՛նչ խրախճան կարող էին ունենալ նրանք, առանց տիրող մեծերի մասնակցու-

⁸⁶) «Հանդէս. գրակ. և պատմ.», 1896, էր. 299 և 302:

թեան: Այստեղ էլ ահա հարկաւոր է եղել զվարճացնել օտարին նրա լեզուով: Շատ հաւանական է, որ այսպէս լինին եղած մեր աշըղները նոյն իսկ հին պարսից տիրապետութեան ժամանակ: Այդ ժամանակ էլ մեր աշըղները իրանց վէպերը կը յօրինէին պարսից լեզուով: Եւ ով գիտէ, թէ պարսից հին վէպերի մեծ մասը Գողթան երգիչների յօրինածը չե՛ն: Հայոց բարբառները իրանց քերականութեամբ նման են թուրքերէնին և երկուքն էլ ենթարկւած են պարսկական տիրող լեզւին: Հայ ժողովրդի համար և առաւել ևս նրա երգիչների, ոչինչ դժւարութիւն չի եղել թուրքերէնին հմտանալ և խօսել նոյն լեզուով: Նոյն իսկ այս լուպէիս շատ զիւղեր կան, որոնք շատ հեռու են թուրքերից, բայց շատ լաւ խօսում են թուրքերէն: Այդ լեզուն կարծես հայի համար օտար չլինի»⁸⁷):

Իրաւ, ի՛նչպէս կարող են ոգևորող ու կենսազոր-ծող տպաւորութիւն անել մեր սովորական երաժշտական խմբերի, «սազանգարների», այն երգերը, որոնք, ի նախատինս մեր լուսաւոր ժամանակի, երգվում են մեր տներում պարսիկ կամ վրացի լեզուներով, յաճախ իրանց բովանդակութեամբ անասնական զրգիռներ առաջ բերելով ունկնդիր երկսեռի պատանիութեան ու երիտասարդութեան մէջ: Մեզ հարկաւոր են ժողովրդական ու տոհմային կեանքից երգող կանոնաւոր, կարգին երգեցիկ խմբեր, որոնց

⁸⁷) «Տարազ», 1893, էր. 140:

կարողանայինք ականջ դնել, որոնք կարողանային պատճառել լսելիքներն հեշտանք, սրաներիս թրթիւ, հոգիներն խոյանք:

Երբ երգը թարմ ու ջերմ հոսանք չէ մտցնում ունկնդիրների ջղերը, երբ նրանց յղփացած ու թրմ-րած սրտերը չէ թրթռեցնում ժողովրդական, գիւղական կեանքի, հայրենի օջախի, տոհմային անցեալի ու ժամանակակից կեանքի ծփանքներով: Երբ երգը ժողովրդի բարքերից, նրա չար ու բարուց, նրա կարմիր ու սև օրերից, նրա հոգու լարերից, նրա սրտի զարկերից չէ խօսում: Երբ երգը սիրելի չէ անում ժողովրդին, ամբոխին, նրա հայրենի գիւղի հողն ու ջուրը, երկինքն ու արեւը, անձն ու արտը, ծառն ու ծաղիկը: Երբ երգը նրանում չէ զարթեցրնում իր հայրենի երկրի սրբավայրերի, աւերակների և նոյն իսկ «աղի-լեղի աղբիւրների» կարօտը, — այն ժամանակ մի այդպիսի երգ ու երգեցողութիւն միայն թմրեցնել կարող է զուարճութեան տրամադրված ունկնդիրներին:

Մեծ դեր ունի կատարելու այս աստուրեզում նաև էջմիածնի պարծանք՝ Կոմիտաս վարդապետը, ունե-նալով հմուտ երաժշտագետի հոշակ և բուն հայ-ժողովրդական հարիւրաւոր երգ ու պարի մի հարուստ հաւաքածու, եթէ միայն հնարաւորութիւն ունենայ երգեցիկ խումբ կամ խմբեր կազմակերպելու, որոնք «Լոյսի Մօր» կողմից ուղարկվէին՝ նրա տարագիր ու տարալեզու որդիներին հոգեկան հրձուանք պատճառելու:

Պակաս դեր չեն խաղում և՛ Գրադարաններն ու շրջան Գրադարանները, եթէ միայն հարուստ են ընթացիկ, պիտանի ու լաւագոյն լաւախօս հայ գրքերով:

Ահագին նշանակութիւն ունեն լեզուաշինութեան գործում մանաւանդ Բառարանները: Բառարանը, եթէ կարելի է ասել, գրքերի գիրքն է, նրանց լեզուավորն է: Մենք սովորաբար Բառարանին նայում ենք, ինչպէս մի շատ կարգացած ու շատգէտ մարդու, ինչպէս մէկ էնցիկլօպէդիստի, որին դիմում ենք ոչ միայն այն դէպքում, երբ չգիտենք այս կամ այն բառի նշանակութիւնը, այլ և այն՝ երբ կասկածով ենք վերաբերվում գիտեցածներիս, երբ գոհ չենք մեզ յայտնի բառի կազմութեամբը և ցանկանում ենք աւելի լաւ, աւելի կոկ, աւելի հայաշունչ բառ գտնել: շատ անգամ, երբ հայ բառի իմաստն այնքան էլ պարզ չէ մեզ համար, — իսկական իմաստն ենք ուզում իմանալ: Աւելին կասեմ: Բառարանից մենք մինչ անգամ գիտական մտքեր ենք ուզում սովորել, սովորածներս վերլուծել:

Բացի սրանից՝ Բառարանին դիմում ենք՝ ոչ միայն բառի ճիշտ նշանակութիւնն իմանալու, այլ և հետամուտ լինելու, որ այդ նշանակութիւնը, իմաստը արտայայտված լինի մաքուր, կանոնաւոր լեզուով: Սրա պատճառն այն է, որ Բառարանը ոչ միայն բառերի, այլ և լեզուի օրէնքագիրքն է: Նրա բառն էլ, խօսքն էլ օրէնքի ուժ պետք է ունենան: Մեր

տարակցյաների ու տարաձայնութեանց դէպքում միակ հեղինակաւոր, վճռահատ խօսքը նրանք պէտք է լինի: «Տեսնենք, Բառարանն ի՞նչ է ասում», ասում ենք ամէն անգամ, երբ դժուարանում ենք մի որոշ եղբակացութեան դար: Նեակապէս՝ Բառարանը չք պէտք է բաւականանայ, որ ունի կամ ուսացած և առհասարակ օտար լեզուի բառի իմաստը ճիշտ արտայայտված լինի. պէտք է մի և նոյն ժամանակ, որ հայերէնն էլ, որով այդ իմաստն արտայայտվում է, գողտրիկ հայերէն լինի, որպէս զի նրան գործածողն էլ լաւ հայերէնի ճաշակն առնի, շարունակ մաքուր ու կոկ լեզուի հետ շփվելով:

Միւս կողմից, յայտնի է, որ Բառարանն է, ինչպէս և քերականութիւնը, լեզուից կազմվում, և ոչ դրա հակառակը: Այս է պատճառը, որ տասնեակ տարիներ առաջ, մեր աղքատիկ լեզուի համապատասխան էլ ողորմուկ բառարաններ ունէինք:

Իսկ այսօր բոլորովին ուրիշ է: Այսօր մեր նոր լեզուն — հակառակ շատերի կարծիքի, թէ դեռ ևս մանուկ է, — առաջ է գնացել մեծ քայլերով ու անարգել առաջ է դիմում: Նա արդէն պատանիութեան շրջանումն է և բաւական իշխում է ինքն իր վրայ: Նրա մէջքն այժմ բաւական ամրացած է, սրունքները պինդ են, քայլերը՝ հաստատ: Նա էլ չէ թոթովում, նա խօսում է, ձառում է: Նրան հասկանում են ամէնքը: Նա հիմա, եթէ ուզում էք, անդիմադրելի է: Եւ նա առաջ է գնում արագ-արագ ու համարձակ: Այս պատճառով էլ նա հիմա կա-

տարեալ, լեակատար բառարաններ է պահանջում: Այս բոլորից եզրվում է այն, որ Բառարան կազմելը մի՛ մարդու գործ չէ, որովհետև այդ մէկը, — չլինելով համայնագիտակ, — շատ-շատ՝ առժամանակէս կարող է գոհացում տալ մեր պէտքերին, միմիայն «եօլա տանել» կարող է, ոչ աւելի:

Պէտք է արդեօք աւելացնել, որ լաւ, լեակատար Բառարանը այն Բառարանը կարող է լինել, որ մի և նոյն ժամանակ կարող կլինի և լաւ օժանդակ լինել Բարբառական գործին:

Բայց հայերէնի կամ մայրենի լեզուի բնական ու իսկական, այսինքը բնութիւնից կարգված ուսուցիչը, անշուշտ, ինքը ճայն է, որ «սովորեցնում է իր երեխային խօսել, որ տաքացնում է նրա մատներն իր ձեռքերում, նրա մարմինը՝ իր ծնկներում, նրա հոգին՝ իր սրտում»: Մօր կաթովն են շագված երեխայի խօսքերն ու լեզուն, այդ կաթի մէջ են մտած նրա շունչն ու հոգին:

Կլինելով միշտ ու անբաժան իր ձագոյլի կողքին, ապրելով նրա հետ, նրա մէջ ու նրա համար, մայրը՝ ինչ լեզու ուզենայ, այն լեզուն կտայ նրան: Նրա իմաստութիւնից, նրա մայրութիւնից է կախված, թէ ինչ կաղապարի մէջ կձուլի իր երեխան, ինչ աւազանում կմկրտի նրա լեզուն, սիրտն ու հոգին, — այս պատճառով լեզուաշինութեան ու լեզու տարածելու, լեզու ոտքի կանգնեցնելու գործում առա-

ջին տեղը մայրն է բռնում: Ո՛չ մի շեշտ, ոչ մի ձայն,
 ոչ մի լեզու այնպես արագ ու խորը չէ՛ տպվում
 երեխայի սրտում ու հոգում, ինչպես այն, որ մօր
 էութիւնից է բխում: Ահա՛ թէ ինչ աստիճան տը-
 պաւորվող էակի հետ ունի գործ մայրը, ահա՛ թէ,
 ինչպես պէտք է դողայ նա իր լեզուի վրայ: Այո՛,
 մայրն է ամէն բան, մայրը, որին և զլիաւորապէս
 վերապահված է լուծել եւ ԼԵՁՈՒԻ ՀՍՐՑԸ:



ՀԵՂԻՆԱԿԻ ԳՐԱԴՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Դասագրքերը.

1. Ընտիր Հատուածներ, Ա. մաս — Արձակ, չորրորդ տիպ, 475 երես. Գինն է 1 ռ. . .
2. Ընտիր Հատուածներ, Բ. մաս — Բանաստեղծութիւններ, ա. տիպ, 476 երես. Գինը 1 ռ. 25 կօպ. .
3. Հայոց լեզուի ուսուցիչ, Դ. տարի, չորրորդ տիպ, 312 եր. Գինը՝ 60 կօպ. .
4. Հայոց լեզուի ուսուցիչ, Գ. տարի, չորրորդ տիպ, 142 եր. Գինը՝ 40 կօպ. .
5. Հայոց լեզուի ուսուցիչ, Բ. տարի, երկրորդ տիպ, 144 եր. Գինը՝ 35 կօպ. .
6. Համառոտ Քերականութիւն, Ա. մաս — Նախադասութիւններ և Մասունք Բանի, 54 եր. Գինը՝ 20 կօպ. .

Բ. Կրօնական գրուածքները.

7. Յիսուս Քրիստոսի Մկրտումիւնը, 36 եր. Գինը՝ 8 կօպ. .
8. Չարչարանքի շարածը, (վեց պատկերով), 80 եր. Գինը՝ 15 կօպ. .
9. Պարզ Քարոզներ, Ա., 75 եր. Գինը՝ 15 կօպ. .
10. Պարզ Քարոզներ, Բ., 92 եր., երկր. տիպ, Գինը՝ 15 կ. .
11. Պարզ Քարոզներ, Գ., 120 երես. Գինը՝ 20 կօպ. .
12. Պարզ Քարոզներ, Դ., 110 երես. Գինը՝ 20 կօպ. .

Գ. Թարգմանութիւնները.

13. Կրօնի Պատմութիւնը, 523 եր. Գինը՝ 1 ռ. 25 կօպ. .
14. Երկու Տօնածառ, 24 եր. Գինը՝ 20 կօպ. .
15. Պօլուիմպերիալ, (մանկական պիէս), 42 եր. Գինը՝ 20 կ. .

Գ. Այլ և այլ զրուածքները.

16. Հայոց Առաջին Հնդհանուր Ուսուցչական Ժողովի Պատմութիւնը, 170 էրես. Գինը՝ 50 կօպ.
17. Լեզուի Հարցը, Ա. Մաս — Հանուր Հայեացք. 98 էրես. Գինը՝ 40 կօպ.
18. Ոտանաւորներ, (Երեխաների Համար), 15 պատկերով, 72 էրես. Գինը՝ 50 կօպ.
19. Նախապաշարմունքներ, Ա. Հատոր, 84 էր.: Գինը՝ 50 կ.
20. Անէկդոտներ, Ա. Հատոր, 223 էր.: Գինը՝ 50 կօպ.
21. Անէկդոտներ, Բ. Հատոր, 153 էրես. Գինը՝ 50 կօպ.
22. Անէկդոտներ, Գ. Հատոր, 250 էրես. Գինը՝ 50 կօպ.
23. Օրացոյց (ընդարձակ յաւելուածով), 1887—1895.

Հեղինակի հասցէն. Москва, Свящ. Э. Назарьянцъ.

« Ազգային գրադարան



NL0238828

7098